



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ՍՐՏԱԳԻՆ ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
ԱՅՐ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՐ ՈՐԵԻՔ ՄԷԿԸ ՁԵՁ ՃԱՆԱՊԱՐՀ ՏՐԱՄԱԴՐՈ՞ՒՄ Է, ԹԷ՞ ԱՅՆ ԲԱՅՈՒՄ ԷՔ ՄԻԱՅՆ ԴՐՄԻՑ ԴԷՊԻ ՍԻՆԻՔ. ՄԱՆՈՒԷԼ ՍԱՐԳՍԵԱՆ	5
ԿԻՊՐԱՀԱՅ	7
ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՄՈՒԻՏ ՆԱՐԵԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ	7
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՆԻԿՈՍԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԴԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ	8
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	9
«ԹՐԱՄՓԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ»	9
ՀԱՅՈՑ ԲՈՆԱԳՐԱԽԵԱԼ ԵՒ ԼՔԵԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ	11
ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՐԹԸ ԿԱՍԵՅՈՒԱ՞Ծ, ԻՄԿ	14
ԱՆՀԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԱՄՐԱՅՈՒԱԾ ԵՒ ԵՐԿԱՐԱԶԳՈՒԱ՞Ծ	14
ԼՐԱԳՐՈՂՆԵՐ «ԱՌԱՆՅ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ»	16
1958-Ի ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ՈՃԻՐՆԵՐՈՒ 67-ԴՆ ՏԱՐԻՆ	19
ՏԵՍԱԿԷՏ	21
ԱՆՄԻԱԲԱՆ ՀԱՅԸ	21
ՍԻՆԻՔԻ «ԶՐԱՀԱՊԱՏ ԳՆԱՅՔԸ». ԻՆՉՈ՞Ւ ԹՐԱՄՓԸ ԿԱՆՉԵՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ	23
ԴԱՌՆԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ	24
ՀԱՅՈՒ ՇԱՀԸ ԵՒ ԻՐԱԻԸ	26
ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԷՆ ԴԷՊԻ ՀՆԱՐԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ	30
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	35
ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	35
ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԲԵՐՔԱՌԱՏ ԿԱՂՆԻՆ ՏԱՊԱԼԵՅԱԻ	38
ՄԱՀ՝ ՄԱՐՄԱՐԱ ՕՐԱԹԵՐԹԻ ԽՍԲԱԳՐԱՊԵՏ՝	38
Ռ. ՀԱՏԷՃԵԱՆԻ	38
ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵՐԷՆ	40
ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ	42
ԽՈՀԱԳՐՈՒԹԻՒՆ	42
ԱՆՆՊԱՏԱԿ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ ՄՕՏ ԵՒ ՀԵՌՈՒ	44
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	46

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 49

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄՐՏԱԳԻՆ ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ



Ազգը կ'ապրի, կը բարգաւաճի եւ կը յարատեւէ իր հայրենիքով եւ անշուշտ անոր վրայ կայացած պետականութեամբ: Բայց հայրենիքը, հայրենի հողն է, առաջին հերթին, որ ծնունդ կու տայ պետականութեան: Ներկայ աշխարհի դրուածքին մէջ, համաշխարհայնացման քարոզչութիւնը եւ անոր ամենակուլ յորձանքը ամէն ինչ ըրած են տակնուվրայ, խառնաշփոթի վերածելով

ինքնութիւն եւ գիտակցութիւն, պատմութիւն եւ մշակոյթ, հայրենիք եւ պետականութիւն հասկացողութիւնները...

Փորձենք յստակացնել:

Հայոց հայրենիքը մեր հայրերու այն բնօրրանն է, այն հողատարածքը, ուր ծներ ու սներ է հայ ցեղը, արարեր ու կերտեր է իր մշակոյթը, հայոց լեզուն ու բանահիւստութիւնը, հայոց աւանդութիւնները, հայոց ապրելակերպն ու հայոց կենցաղը, հոգեմտաւոր ու բարոյական արժէքները եւ անշուշտ հայոց պատմութիւնը: Պիտի չըլլար վստահաբար հայ ժողովուրդ, եթէ չըլլար այն հողատարածքը, այն հայրենիքը, որ ծնունդ ու սնունդ տուեր է իր զաւակներուն, ճիշդ մօր նման, դարեր ու հազարամեակներ: Հայոց հայրենիքն ու հայրենի հողը շաղախուած են հայ ժողովուրդին հետ որպէս մէկ հոգի եւ մէկ մարմին: Հետեւաբար, նախասկիզբը հայոց հայրենիքի եւ անոր վրայ ապրող ժողովուրդի գոյութիւնն է: Իսկ պետականութիւնը կը ստեղծուի նոյն այդ ժողովուրդին կողմէ որպէս անոր կազմակերպութեան բարձրագոյն մարմինը կամ հաստատութիւնը, որ իրաւական հիմք կու տայ անոր պաշտպանելու իր շահերը, ստեղծելու եւ պահել-պահպանելու իր կառոյցները ինչպիսիք են բանակը, կառավարական մարմինները, նախարարութիւնները... անդամակցելու համաշխարհային հանրութեան եւ ծրագրաւորելու, օրէնքներով ամրագրելու, իրագործելու իր տնտեսական, կրթական-մշակութային, աշխարհաքաղաքական, արդիւնաբերական, դիւանագիտական, ինքնապաշտպանական եւ զարգացման կեանքը:

Ժողովուրդը ազգ կը դառնայ պետական անկախութիւն նուաճելով, անկախ պետականութիւն ստեղծելով, ինչ որ հզօրագոյն երաշխիքը կը դառնայ անոր հաւաքական կեանքի կարգաւորման, պաշտպանողականութեան, անոր բարգաւաճման, հզօրացման եւ յառաջդիմութեան:



Ճիշդ է որ առանց պետականութեան, խոցելի կ'ըլլայ հայրենիքը, բայց սխալ պիտի ըլլար հայրենիքը նոյնականացնել պետականութեան հետ: Ներկայիս շարունակաբար կը քարոզուի, կը գովազդուի՝ պետական բարձրագոյն մակարդակով, այն տեսակէտը կամ լոգոսփոյսը որ «Հայրենիքը պետութիւնն է»...:

Եթէ ընդունինք «Հայրենիքը պետութիւնն է» կարգախօսը, յայնժամ հարց պիտի տանք, թե՛ արդեօ՞ք հայրենիք չկայ առանց պետութեան: Սա նաեւ կ'ենթադրէ որ չկայ Արեւմտեան Հայաստանը, չկայ Արցախը եւ հետեւաբար չկայ կամ անիմաստ կը դառնայ Հայոց Դատը կամ մեր Պահանջատիրութիւնը: Եւ արդեօ՞ք այս է գինը զոր պիտի վճարենք «Խաղաղութեան» համար, դուրս հանելով նաեւ դասագիրքերէն հայոց պատմութեան այն էջերը որոնք անյարիր կը թուին ըլլալ ԽՍՀՄ-ԽՍՀՄ-ԽՍՀՄ հետ: Եւ արդեօ՞ք նոյն այս պատրուակով, պիտի փոխենք Սահմանադրութիւնը, պիտի նսեմացնենք մեր սրբազան լեռն Արարատ եւ յանձն պիտի առնենք նման եւ այլեւայլ ուրացումներ, մոռնալով ազգային մեր արժանապատւութիւնը, մեր արմատները եւ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԻՔԸ որ նաեւ ՈԳԵՂԷՆ իրականութիւնն է, դաջուած մեր ԷՈՒԹԵԱՆ եւ մեր ԾԻՆԻՆ կամ ԳԵՆԻՆ մէջ: Սա միայն կրնայ ծառայել թշնամիին օրակարգին, ա՛յն է տկարացնել մեր կապը մեր պատմութեան հետ, մեր պատմական անցեալի դարերուն եւ հազարամեակներուն հետ, ջլատել մեր ազգային ոգին, մեր ազգային ինքնաճանաչումն ու ինքնագիտակցութիւնը, վտանգի ենթարկել մեր լինելութիւնն իսկ...

Իսկ ի՞նչ պիտի ըլլան արեւմտահայութեան մնացորդաց ժառանգ՝ ՍՓԻՒՌԸ, ՍՓԻՒՌԸՆԵՐԸ, ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌԸ կապերը, որոնց ամրապնդումը ազգի երկու տարանջատ մասերու հօգորացման աղբիւր է եւ միաժամանակ թշնամիին աչքին փուշը...

Հայրենիքը աւելին է քան աշխարհագրական տարածքը, աւելին է քան նիւթեղէն հողը, աւելին է քան բնակավայրը...: Աւելին է քան պետականութիւնը: Անիկա ոգեղէն խորհուրդ ունի իր մէջ, մասնիկ մը՝ մեր նախահայրերու արիւնէն ու արցունքէն, սրբազան աճիւնէն..., մասնիկ մը՝ ոգեկան մեր գանձերէն, դարերու ստեղծագործական երկունքէն...մասնիկ մը՝ մեր դարաւոր աւանդութիւններէն, առաքինութիւններէն...Կրողն է ան մեր պատմութեան շունչին, տառապանքին, մաքառումներուն, խոյանքներուն, երազին ու տեսլականին...ՀԱՅՐԵՆԻՔԸ ԱՊՐՈՂ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ Է, ՅՈՅՍԵՐՈՎ ԵՒ ԼՈՅՍԵՐՈՎ ՕԾՈՒԱԾ ՎԱՅՐ, ԱՐԵԱՆ ԿԱՆԶ...ԱՆԻԿԱ ՍՐԲՈՒԹԻՒՆ Է:

Շարունակելով միտքս, ՀԱՅՐԵՆԻՔԸ ՀՈԳԵՒՈՐ ՏԱՐԱԾՔ Է ԳԵՐԱԶԱՆՑՕՐԷՆ...Եթէ զայն պարպենք իր հոգեւոր-բարոյական-մշակութային արժէքներէն, որոնք դարձ-դար եւ սերունդէ-սերունդ կերտուեր են ՀՈԳԻՒ Եւ ՈԳԻՒ տքնութեամբ, յայնժամ ՀԱՅՐԵՆԻՔԸ կը վերածուի սոսկ աշխարհագրական տարածքի, կամ սովորական բնակավայրի, զոր կարելի է փոխարինել մէկ այլ տարածքով...Մեր անկախութեան սկզբնական շուրջ քսանամեայ ժամանակաշրջանին, ՀՀ քաղաքական վերնախաւը հայրենիքը դիտարկեց գերազանցօրէն որպէս իր սեփական ազարակը, զոր պիտի անխնայ շահագործել յանուն միայն սեփական շահերուն...Այս նպատակին կենսագործման համար, անհրաժեշտ էր նաեւ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀՈԳԵԶՐԿՈՒՄԸ, անոր ԱՊԱՄՇԱԿՈՒԹԱՅՈՒՄԸ: Արդեօ՞ք սա ծրագրաւորուած գործընթաց չէ՞ր, որ կը միտէր ՀԱՅՐԵՆԻՔԸ ԽՈՐՀՐԴԱԶԿԵԼՈՒ, ՈԳԵԶԿԵԼՈՒ, որպէսզի



հնարաւոր ըլլար անոր ԿԵՂԵՔՈՒՄՆ ու ՅՕՇՈՏՈՒՄԸ, որոնք ուղիղ հայրենիքը կը տանին կործանման եւ ոչնչացման:

Այսօր մեր ապրող ու շնչող ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ գերագոյն մարմնաւորումը պիտի ըլլայ հայ ժողովուրդի ազգային իտեալներուն ու տեսլականին, ոգորումներուն ու մաքառումներուն, պիտի ըլլայ այն բարձրագոյն, գերակայ ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ, որ ՏԷՐՆ է համայն հայութեան իրաւունքներուն, իղձերուն, արժանապատիւ ՏԷՐԸ մեր ճակատագրին, ԳԵՐԱԳՈՅՆ ԵՐԱՇԽԱՒՈՐԸ մեր ժողովուրդի, ազգի յարատեւութեան, հզօրացման եւ լինելութեան: Իսկ իւրաքանչիւր հայ, ՀՀ քաղաքացի թէ այլ երկրի քաղաքացի ըլլայ ան, պարտի հարց տալ թէ ի՞նք ի՞նչ կրնայ ընել իր Մայր հայրենիքին, իր պետականութեան հզօրացման ի նպաստ, վեր ելլելով իր անձնական, հատուածական եւ այլ նկատառումներէն: Իւրաքանչիւր հայ պիտի մտածէ, պիտի գործէ ամրացնելու, պնդացնելու համար մեր բզքտուած, յօշոտուած երկիրը իրաւ հայրենասիրութեամբ, նոյնիսկ եթէ հարկադրաբար ան կ'ապրի անոր սահմաններէն դուրս: Ես կը հաւատամ Հայաստանի Հանրապետութեան յաւերժացման, ես կը հաւատամ ՀԱՅ ՈԳԻՒՆ, որ գիտէ արթննալ հրաշագօր ոյժով եւ պաշտպանել հայրենիքն ու արդարութիւնը:

Ինչ կը վերաբերի 8/8/2025-ին նախաստորագրուած՝ Փաշինեան-Թրամփ-Ալիւ եռակողմ Համաձայնագրին, որ կը կոչուի «Թրամփի ուղի՝ յանուն միջազգային խաղաղութեան և բարգաւաճման» (TRIPP), անիկա շրջադարձային ըլլալով հանդերձ՝ շատ ջուր կը վերցնէ, ինչպէս պիտի ըսէր մեր ժողովուրդը: Կը մաղթենք որ ան որոշ ապահովութիւն, կայունութիւն եւ շունչ քաշելու ժամանակ պիտի տայ գոյութենական սպառնալիքի տակ կանգնած մեր պետութեան եւ առեւտրատնտեսական նոր դուռեր ու հնարաւորութիւններ բանայ, հիմնուած պետութիւններու ինքնիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ իրաւագործութեան յարգանքի հիման վրայ: Ժամանակը միայն կրնայ ցոյց տալ անոր մեզի ի նպաստ արդիւնաւետութեան մասին կամ՝ հակառակը, մանաւանդ նկատի ունենալով ցեղասպան Թուրքիոյ եւ Ատրպէյճանի պահանջները, նորանոր սպառնալիքները, թշնամական արտայայտութիւնները, Ռուսաստանի եւ այլոց նկրտումները... Յամենայնդէպս, մենք միշտ ալ պատրաստ պէտք է ըլլանք դիմագրաւելու մեր առջեւ ծառացած եւ ծառանալիք մարտահրաւերները եւ տքնաջան աշխատիլ ի նպաստ հայոց երկրի, հայոց պետականութեան հզօրացման եւ բարգաւաճման բոլոր ուղղութիւններով՝ տնտեսական, ռազմական, գինոյժի, գիտակրթական, արհեստագիտական, դիւանագիտական, կազմակերպչական-կարգապահական եւ այլ: Հայոց հզօր պետականութիւնն է գերագոյն երաշխիքը մեր բոլոր ազգային իղձերուն եւ երազներուն իրականացման:

Դեռ 1919-ին, Դեկտեմբեր ամսուան մէջ խօսած իր ճառին մէջ, Հայաստանի առաջին Հանրապետութեան առաջին վարչապետ Յովհաննէս Քաջազունին սրտազին կոչ կ'ընէր ամերիկահայութեան. «Խմբուել՝ անկեղծօրէն ու անվերապահօրէն՝ Հանրապետութեան շուրջը, ոյժ եւ կենսունակութիւն տալ նրան-ահա օրուայ պահանջը, ահա ամէն հայի սրբազան պարտքը»:

Այս գիտակցութեամբ, այս հաւատքով, այս տեսլականով, ի խորոց սրտի կը ողջունենք ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 34-րդ տարեդարձը, մաղթելով որ ան տակաւ հզօրանայ, ամրանայ, զարգանայ եւ յարատեւէ դարէ դար, հազարամեակէ հազարամեակ:

Փա՛ռք ու պատի՛ւ եւ խոնարհո՛ւմ հայրենիքի պաշտպանութեան համար իրենց կեանքը նուիրաբերած բոլոր այն հերոս տղոց եւ անոնց որդեկորոյս մայրերուն, որոնց հայրենասիրական-հայրենատիրական սիրանքը կարելի դարձուց հայոց հայրենիքի ու անոր պետականութեան յարատեւումը:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

ԱՅԴ ԴԱՐՊԱՍԻ ՀԱՄԱՐ ՈՐԵԻՔ ՄԷԿԸ ՁԵԶ ՃԱՆԱՊԱՐՀ ՏՐԱՄԱԴՐՈ՞ՒՄ Է, ԹԷ՞ ՄՅՆ ԲԱՑՈՒՄ ԷՔ ՄԻԱՅՆ ԴՐՄԻՑ ԴԷՊԻ ՄԻՆԻՔ. ՄԱՆՈՒԷԼ ՄԱՐԳՍԵԱՆ

«Մեղիալարի» հարցերին պատասխանում է քաղաքագէտ Մանուէլ Սարգսեանը



– Պարո՛ն Սարգսեան, ՀՀ նախագահը յայտարարել է, որ «եթէ մենք կարողանում ենք բացել Սիւնիքի դարպասները, ես նկատի ունեմ 43 կմ-ի հնարաւորութիւնները, ուրեմն իսկապէս վստահ եղէք, որ ապագան զարգացման առումով շատ մեծ հնարաւորութիւններ է տալու մեզ»: Իսկապէ՞ս այդ 43 կմ-ը ապագայի զարգացման

առումով այդքան վճռորոշ է լինելու մեզ համար:

– Ըստ էութեան, ասուած նոր բան չկայ, բայց քանի որ նախագահի մակարդակով է ասուել, ես կարծում եմ, որ ժամանակն է պահանջել, որ լաւ բացատրութիւն տրուի, որովհետեւ տարիներ են անցել 2020-ից, բայց ոչ մի արդիւնք չկայ: Բոլորի համար պէտք է պարզ լինի, թէ ինչ ասել է դարպաս բացել. դարպաս վաղուց բաց է Սիւնիքից դէպի Իրան, հիմա էլ է բաց, այսինքն՝ խօսքը հիմա Ադրբեջանի ու Թուրքիայի մասին է, դարպաս դէպի այդ երկրներ, որը, փաստօրէն, պէտք է պայմաններ ստեղծի Հայաստանի Հանրապետութեան զարգացման համար:



Բնական է, որ եթէ բոլոր ճանապարհները բացուեն Հայաստանից՝ Ադրբեջանով դէպի Ռուսաստան, դէպի Կենտրոնական Ասիա Թուրքիայով, ամբողջ Հարաւ ու Արեւմուտք այդ ամէնը բացուեն, ապա բնական է, որ դա մեծ փոփոխութիւն կը լինի, ու Հայաստանի համար մեծ հնարաւորութիւն կը ստեղծի: Բայց, կրկնում եմ, շատ կարեւոր է բացատրութիւն տալ, թէ ինչպէս են ստեղծում այդ հնարաւորութիւնները, ո՛նց են բացում այդ դարպասը, այդ դարպասի համար որեւէ մէկը ձեզ ճանապարհ տրամադրո՞ւմ է, թե՞ այդ դարպասը բացում էք միայն դրսից դէպի Միւնիք: Գլխաւոր հարցերը սրանք են, որոնք պէտք է յստակ բացատրութիւն ստանան:

Մենք այսօր անընդհատ Ադրբեջանի նախագահից լսում ենք այն միտքը, որ Հայաստանի Հանրապետութիւնը անօրինական պետութիւն է, հայերն իրաւունք չունեն այս տարածքներում պետութիւն կառուցելու, ընդհանրապէս պետութեան գոյութիւնը ժխտում է, ու սա ասում է նախագահի մակարդակով:

Հայաստանը հիմա պէտք է յստակ ասի, թէ ի՛նչ քաղաքականութիւն է վարում, որպէսզի Ադրբեջանի ու Թուրքիայի այս դիրքորոշումը փոխուի, ես չեմ տարբերակում, որովհետեւ նրանց քաղաքականութիւնը նոյնն է, Թուրքիան մշտապէս պաշտպանել է Հայաստանի դէմ Ադրբեջանի ուղղուած ցանկացած գործողութիւն: Պատասխան է պէտք, բայց այն չկայ, կան միայն կորուստներ ու զիջումներ, ու հիմա էլ դա շարունակւում է:

– Եթէ ՀՀ նախագահի մակարդակով նշում է Միւնիքով անցնող յստակ թուով երկարութեամբ ճանապարհ, մենք կարո՞ղ ենք ենթադրել, որ խօսքն ամէնեւին էլ կոմունիկացիաների ապաշրջափակման մասին չէ:

– Չի խօսում, ինքը հենց կոնկրետ հատուած է նշում, ինքն ուզում է միստիկ նշանակութիւն տալ դրան, որ եթէ այդ 43 կիլոմետրը բացուի, ապա մնացած հարցերը լուծուելու են:

– Ստացւում է, որ դա հենց Ադրբեջանի ասած «Զանգեզուրի միջա՞նցքն» է:

– Եթէ անգամ դա է, ապա պէտք է բացատրել, դրա համար եմ պնդում, որ պէտք է յստակ բացատրութիւն տալ, որովհետեւ կան մարդիկ, որ ասում են՝ Ադրբեջանն ինչ ուզում է՝ այդպէս էլ արեք, դա է հարցի լուծումը: Հենց սա պէտք է բացատրեն՝ դա հարցի լուծո՞ւմ է, թե՞ չէ: Բարի կամքով միջազգային յարաբերութիւններ չեն ստեղծում, այլ՝ ուժերի հաւասարակշռութեամբ, հարիւր տարի է՝ այդ բարի կամքի յոյսին ենք:



Պէտք է բացատրութիւններ տան այն ամէնին, ինչ պնդում են վստահաբար, թէ դա լուծում է, երբ այդ բացատրութիւնները կը տան, ապա շատերի համար շատ բան պարզ կը լինի: Հենց դրա համար էլ բացատրութիւններ չեն տալիս:

– Պարո՛ն Սարգսեան, չկան ձեր ասած այդ բացատրութիւնները, բայց հողի վրայ կան ՀՀ բարձրաստիճան պաշտօնեաների կողմից հնչող յայտարարութիւններ: Դատելով դրանցից՝ ի՞նչ քաղաքականութիւն է որդեգրել գործող իշխանութիւնը:

– Ոչ մի քաղաքականութիւն, ես լսել եմ ազնիւ մարդկանց, որոնք ասել են՝ ոչ մի յոյս չկայ, պէտք է ցանկացած պայման ընդունել, բայց դա էլ դեռ յոյս չէ, աւելի ազնիւներն ասում են, որ անյոյս է:

Խնդիրը հենց սա է, որ պէտք է բացատրեն ամէն ասուած, ցոյց տան, թէ ինչպէս են պատկերացնում այդ ասուածի իրագործումը, ժամանակն է, որ այդ մարդիկ պատասխանատուութեան տակ մտնեն, թէ չէ ինչ ասես կարող են յայտարարել ու յայտարարում են, բայց ռեալ քայլեր, որ պէտք է արուեն, ոչ մէկը չի մատնանշում դրանք:

Քրիստինէ Աղաբեկեան

MediaLab.am

ԿԻՊՐԱՀԱՅ

ԿՐԹԱԿԱՆ ՏԱՐԵՄՈՒԻՏ ՆԱՐԵԿ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ



Ուրբաթ 5 Սեպտեմբեր, 2025-ի առաւօտեան կատարուեցաւ վերաբացման արարողութիւնը Նիկոսիոյ Նարեկ հայկական վարժարաններու Միջնակարգի բաժինին՝ Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ մէջ:

Հոգեպարար շարականի երգեղողութենէն ետք, Թեմիս Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս արք. Օհանեան իր սրտագին մատթանքները արտայայտեց Նարեկ վարժարանի

տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան, յատկապէս նշելով. «Մեր ուսուցիչները այնպիսի կարեւոր դեր կրնան խաղալ որ աշակերտներու հոգիներէն ներս սերմանեն գրող, բանաստեղծ ըլլալու ցանկութիւնը...Մենք պէտք է սիրենք մեր գիրն ու



գրականութիւնը, մեր արուեստն ու մշակոյթը...Ուրախ ենք որ Նարեկ վարժարանը մեծ կարեւորութիւն կու տայ հայերէնի կողքին, թատրոնին, երգին, բեմական խօսքին...»: Ան փափաք յայտնեց որ հայերէնը եւ տեղական պատուական ժողովուրդի լեզուն՝ յունարէնը, նոր որակ ստանան, անոնց սերը բազմապատկուի, որպէսզի անոնք այդ ճամբով կարենան դառնալ մեր վաղուան առաջնորդները...Իր հայրական յորդորին մէջ, ան կոչ ուղղեց աշակերտներուն աշխատիլ, ջանալ լաւագոյնս, յարատեւ սիրով, նուիրումով, կարգապահութեամբ պահել-պահպանելու հայ գիրն ու գրականութիւնը, նոր մակարդակ տալ հայերէն լեզուին...Ապա մաղթեց յաջող եւ բարի կրթական տարի բոլորին:

Այս տպաւորիչ արարողութիւնը վերջ գտաւ աշակերտութեան կողմէ հնչող «Հայր Մեր» Տէրունական աղօթքով եւ Սրբազանին Պահպանիչ աղօթքով:

Նարեկ հայկական վարժարաններու Նախակրթական բաժինը ի Նիկոսիա, Լաոնագա եւ Լիմասոլ իր ուսումնական տարեշրջանը սկսաւ Երկուշաբթի 8 Սեպտեմբեր 2025-ին: Գեղեցիկ եւ իմաստալից աւանդոյթով, կրթական տարին երեք դպրոցներուն մէջ ալ սկսաւ դպրոցներուն կից հայոց եկեղեցիներու մէջ կատարուած արարողութեամբ, Նիկոսիոյ մէջ՝ Ս. Աստուածածին մայր եկեղեցւոյ, Լաոնագայի՝ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ, Լիմասոլի մէջ՝ Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, հոգեպարար աղօթքներով եւ ոգեշունչ խօսքերով:

ԱԶԱՏ ԽՕՍՔը բարի եւ յաջող կրթական տարի կը մաղթէ բոլորին այս ուրախ առիթով:

Ե.Գ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ՀԲԸՄԻՈՒԹԵԱՆ ՆԿԿՈՍԻՈՅ ՄԱՍՆԱՃԻԴԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ



11 Յուլիս 2025 թուակիր ե-նամակով, ՀԲԸՄիութեան Նախագահ Տիար Սեմ Սիմոնեանը կ'արձանագրէր հետեւեալը.-

Հ.Բ.Ը. Միութեան Նիկոսիոյ Մասնաճիւղի «Գործող պաշտօնեաներու պաշտօնավարութեան շրջանը աւարտած ըլլալով եւ նկատի ունենալով որ ֆինանսական վիճակը չէ ներկայացուած, ինչ որ պիտի հնարաւորէր ընդհանուր ժողովի եւ նոր ընտրութեանց կայացումը, ՀԲԸՄ Կեդրոնական Վարչական Մարմինը այսու կը նշանակէ հետեւեալ միջանկեալ գործող յանձնախումբը», 1 Օգոստոս 2025-էն սկսեալ:

Միջանկեալ գործող յանձնախումբը իր առաջին ժողովը կայացուց 1 Օգոստոսին եւ որոշեց իր

կազմի անդամներուն պատասխանատւութիւնը հետեւեալ կերպով.-

Էլիզապէթ/Էլօ Քեսթերլեան- Ատենապետ

Ալիշա Նազարի- Ատենադպիր

Արմէն Տեմիրճեան Փոխ Ատենադպիր

Ճագօ Քարաօղլանեան Գանձապահ

Արամազդ Էսքիճեան Փոխ Գանձապահ

Մակի Պասթըրնաճեան Անդամ

Շողեր Գույումճեան Անդամ

Ասիկա կը նշանաւորէ կարեւոր հանգրուան մը զարգացնելու ՀԲԸՄիութեան առաքելութիւնը՝ Կիպրոսի հայ համայնքի միասնութեան եւ ծառայութեան գծով:

Նորակազմ Կիպրոսի յանձնախումբը կը նպատակադրէ.

-Հարուստ փորձառութեամբ եւ միացեալ նուիրումով պահպանել համայնքէն ներս թափանցիկութիւն, հաշուետւութիւն եւ վստահութիւն:

-Զօրացնել Կիպրոսի հայերուն ներքին կապերը՝ մշակութային, կրթական եւ մարդասիրկան նախաձեռնութիւններով:

-Զօրակցիլ հայ երիտասարդութեան մշակելու իրենց մէջ առաջնորդութեան, ինքնութեան եւ պատկանելիութեան որակներ եւ զգացումներ:

Կը հասկնանք որ շրջանառուող լուրերը կամ ըսի-ըսաները մտահոգութիւն պատճառած են համայնքի անդամներուն: Կը փափաքինք հաստատ եւ միասնական ձայնով հերքել այն բոլոր կարծիքները որոնք կը վերաբերին Նիկոսիոյ Մասնաճիւղի ակումբին փակման կամ անոր կալուածին վաճառքը հնարաւորող հանգամանքներուն: Ասոնք անհիմն են ամբողջովին:

ՀԲԸՄիութեան Նիկոսիոյ Մասնաճիւղը յանձնառու կը մնայ ծառայելու Միութեան առաքելութեան եւ տեսլականին իրագործման եւ պիտի շարունակէ աշխատիլ պահպանելու եւ ամրացնելու անոր ժառանգութիւնը:

Անկեղծօրէն,

Էլիզապէթ Քեսթերլեան

Ատենապետ

ՀԲԸՄիութեան Նիկոսիոյ Մասնաճիւղի

ՅՕՂՈՒԱԾՆԵՐ

«ԹՐԱՍՓԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ»



Ինչո՞ւ Ալիէի եւ Փաշինեան ընդունեցան մեկնիլ Ուաշինկթըն նախաստորագրելու խաղաղութեան համաձայնագիրը, որուն համար արդէն երկու ապարդիւն փորձեր եղած էին, մէկը Թիրանայի մէջ, Եւրոպական քաղաքական համայնքի վեհաժողովին 16 Մայիս 2025ին, երկրորդն ալ Տուպայի մէջ՝ 10 Յուլիս 2025ին,

որոնք ձախողեցան Ալիէի պարտադրած նախապայմաններուն պատճառով:

Փաշինեանի պարագային, յստակ է, 2020ի պատերազմին պարտութենէն ետք, Ռուսաստանի խոստմնադրութիւնը ճաշակելէ վերջ, ան կը բաղձար խաղաղութեան համաձայնագիր ստորագրել երկրի կայունութիւնն ու անվտանգութիւնը ապահովելու նպատակով, որուն համար մշակեց Խաղաղութեան խաչմերուկ ռազմավարական ծրագիրը: Երկրագունդի ամենէն հզօր պետութեան նախագահին հովանաւորութեամբ հանդիպում մը խաղաղութիւն հաստատելու համար՝ դրական քայլ է: Այս առումով Հայաստանի դիւանագիտութեան ձեռքբերումը գնահատելի է: ԱՄՆու նախագահի ներկայութեամբ



Ազերպայճանի մայր հողամասը Նախիջեւանի միացնող ճանապարհը անուանուեցաւ «Թրամփի ուղի՝ միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման համար»՝ փոխարէն «Զանգեզուրի միջանցք» յղացքին, այն ալ Հայաստանի տարածքային ամբողջականութեան, ինքնիշխանութեան, իրաւագորութեան եւ փոխադարձութեան պայմաններուն մէջ: Փոխադարձութեան գաղափարը ցայժմ չէր յիշատակուած ինքնիշխանութեան կողքին, ինչ որ կ'ենթադրէ ապաշրջափակում եւ Երասխէն Մեղրի անցք Նախիջեւանի միջոցով: Հայաստան ձեռք բերաւ նաեւ 43 քիլոմէթր ճանապարհի շինութեան համար ամերիկեան մասնաւոր ընկերութիւններու մասնակցութիւնը եւ ԱՄՆու հետ տնտեսական զարգացման երկկողմ պայմանագիր:

Փոխարէնը, Ալիեւի պարագային, աւելի խորքային պատճառ մը պէտք է ըլլար, որովհետեւ Հայաստան-Ազերպայճան խաղաղութեան պայմանագրի ստորագրումը գլխաւոր խոչընդոտողը Ալիեւ ինք իսկ է, որ անդադար նոր նախապայմաններ կը պարտադրէ Հայաստանին, իր ռազմական գերակայութեան առաւելութենէն մղուած: Անդրկովկասի մէջ Ռուսաստանի ազդեցութեան նուազումը զգալի էր Ուքրաինայի պատերազմին բերումով, որ պատճառ դարձաւ նաեւ Արցախէն ռուս կապոյտ սաղարտաւորներու մեկնումին: Նոյեմբեր 9ի հրադադարի եռակողմ համաձայնութեան 9րդ կէտէն հրաժարելով՝ Ազերպայճան վերջակէտ կը դնէր տարածաշրջանին մէջ Ռուսաստանի ներկայութեան կարեւորագոյն յենակէտին: Ասկէ մեկնած՝ վատթարացան Ազերպայճան-Ռուսաստան յարաբերութիւնները, որմէ ալ պէտք է հետեւցնել, որ ա՛յդ է Ազերպայճանի՝ ԱՄՆու մերձենալու գլխաւոր դրդապատճառը: ԱՄՆու կողմէ Ազերպայճանին ռազմական օգնութեան տրամադրումը կը նախանշէ նաեւ Իսրայէլի դերակատարութիւնը: Թրամփի խաղաղութեան եւ բարգաւաճման ճանապարհի վերահսկումին ամերիկեան ընկերութիւններու յանձնումը Իսրայէլին կ'ընձեռէ նաեւ սահմանային այդ հատուածին վրայ եւ անկէ անդին ալ՝ Նախիջեւանէն Իրանի հիւսիսը հեռավար վերահսկելու կարելիութիւն:

Նախագահ Թրամփի համար Փաշինեանի ու Ալիեւի հետ լուսանկար մը ձեռքբերելը անհրաժեշտ էր իրեն կողմնակից ընտրագանգուածին, խաղաղապաշտի իր վարկը բարձրացնելու համար: Իսկ զայն Խաղաղութեան նոպէլեան մրցանակի թեկնածութեան ներկայացնելու Ալիեւ-Փաշինեան համատեղ յայտարարութիւնը Թրամփի եւր շոյող քայլ է, թէեւ այն ինչ որ ստորագրուեցաւ Ուաշինկթընի մէջ նախաստորագրութիւն մըն է, գործնական առումով ոչ մէկ ազդեցութիւն ունեցող:

Թուրքիա ուաշինկթընեան բեմագրութեան մէջ վարագոյրի ետին գործող կարեւոր դերակատար էր, որուն համար Թրամփի ճանապարհը համաթուրանական երազին իրականացումը կը նախանշէ: Եթէ Թուրքիա բանայ Հայաստանի հետ սահմանը, կը նշանակէ թէ Թրամփի միջամտութիւնը օգտակար էր Հայաստան-Ազերպայճան խաղաղութեան դաշինք կնքելու ճանապարհին:

Կը մնայ սպասել թէ Ռուսաստան եւ Իրան պաշտօնական յայտարարութիւններէն անդին գործնականին մէջ ինչպէ՞ս պիտի հակազդեն ամերիկեան այս անսպասելի ներթափանցման: Հայաստանի պետական շահը կը պահանջէ միջազգային դերակատարներու հաւասարակշռուած ներկայութեան ապահովումը տարածաշրջանին

մէջ: Թրամփի ճանապարհին դիմաց Հայաստան պետք է ռազմավարական ամուր երաշխիքներ տայ Իրանին եւ Ռուսաստանին, յատկապէս Հարաւ Հիւսիս ճանապարհի անխափան գործունէութեամբ:


ԺԻՐԱՅՐ ԶՈԼԱՔԵԱՆ

15/8/2025

ՆՈՐ ՅԱՌԱՋ

ՀԱՅՈՑ ԲՈՒՆԱԳՐԱԻՒՄԸ ԵՒ ԼՔԵԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Օսմանեան Թուրքիոյ հայոց տնտեսական հարստութիւններու կորուստի հարցին մասին հրատարակուած է ամերիկեան ու եւրոպական մամուլին մէջ: Հայոց տնտեսական մշակոյթի տեսաբան եւ հրապարակախօս Խաչատուր Դադայեան այս հարցը ուսումնասիրած է եւ հրատարակած գիրքով մը, որ կը կրէ «Հայոց Տնտեսական Ցեղասպանութիւն – Հայերի Տնտեսական գործունէութիւնը Ներկայիս Թուրքիոյ Տարածքում մինչեւ 1915 թուականը – Փաստերի Ժողովածու» խորագիրը, էդիթ Պրինտ հրատարակչութիւն, տպարան «Ոսկան Երեւանցի», Երեւան, 2016, 516 էջ:

Հեղինակը՝ Խաչատուր Դադայեան գիրքին յառաջաբանին վերջաւորութեան կ'ըսէ. «Հայ ժողովուրդը Թուրքիայից ունի թէ՛ հաւաքական եւ

թէ՛ անհատական պահանջներ: Մեր գիրքը ծառայում է երկուսին էլ: Եւ տնտեսական գործօնը, ֆինանսանիութեան հատուցման խնդիրը պարտադրաբար պիտի ներառուի հայոց ընդհանուր պահանջափաթեթում» (էջ 16):

Խաչատուր Դադայեան իր ուսումնասիրութիւնը կատարած է ներկայի Թուրքիոյ բազմաթիւ քաղաքներու մասին սկսելով Կ. Պոլսէն: Ան օգտուած է բազմաթիւ աղբիւրներէ, որոնց մէջ այս նիւթը արծարծող առաջիններէն է պատմաբան Լեւոն Վարդան: Հեղինակը այս մասին կ'ըսէ. «Նիւթական կորուստների խնդիրը մտաւ փապուղի եւ մի ամբողջ յիսուն տարի լռութեան մատնուեց: Ո՞րն է պատճառը: 1970 թ. լիբանանաբնակ պատմաբան, գրական գործիչ Լեւոն Վարդան Պէյրութում հրատարակեց «Հայկական Տասնըհինգը Եւ Հայերու Լքեալ Գոյքերը» գիրքը (էջ 14):

Խաչատուր Դադայեան ճշգրիտ գաղափար մը տալու համար հայոց լքեալ գոյքերու հարստութեանց մասին կը մէջբերէ Ա. Դարեանի խմբագրած «Պատմագիրք Եոզկատի Եւ Շրջակայից (Գամիք) Հայոց» (Պէյրութ, 1988) հատորի էջ 511-էն հետեւեալը.- «Տեղացի թէ դրսեցի պաշտօնատարեր իրենք զիրենք տէր հոչակեցին բազմաթիւ տուններու եւ տիրացան կահ կարասիներուն, մթերքներուն եւ վաճառականական ապրանքներուն: Տուններէն ետք պետութիւնը ձեռք առաւ վաճառատուններու եւ խանութներու հաշուեյարդարը: Այս գործերուն մատակարարման համար ստեղծեց «Էմվալը Մէրթուքէ



Իտարէսի» («Լքեալ գոյքերու Վարչութիւն») կոչուած պաշտօնական մարմին մը, որ նախ նպաստեց հրապարակի ազդեցիկ թուրքերուն... հասարակ թուրքերը, որոնք 5-6 ամիս առաջ իշապան կամ կառապան էին, այժմ ջարդերէն եւ տեղահանութիւններէն աւարուած հարստութիւններով, աղա կամ էֆենտի եղած, լքեալ գոյքերու վարչութենէն կը գնէին հիւսուածեղէնի կամ առանձին պիտոյքներու վաճառատուներ եւ առանց յոգնութեան ու փորձառութեան՝ յանկարծ կը դառնային խանութպան կամ վաճառական (էջ 18):

Խաչատուր Դադայեան գիրքին Ա. Գլուխին – Քաղաքներ – վերնագրուած հատուածին մէջ առաջին հերթին կը գրէ Կ. Պոլսոյ հայոց տնտեսութեան մասին: 5-6-րդ դարերէն ի վեր հայեր կ'ապրէին Կ. Պոլսոյ մէջ: Սկիզբը անոնց բնակչութիւնը եղած է մօտ երեք հազար: Վաճառականներ, ուսեալ մարդիկ, լումայափոխներ եւ հողատէրեր եղած են հայերը:

Թուրքերուն Կ. Պոլիսը գրաւելէ մօտ 150 տարի առաջ, խրիմցի հայեր Կ. Պոլսոյ յոյներուն հետ մեծածաւալ առեստուր ընելու սկսած են: Այդ ատենէն եւ թուրքերուն Կ. Պոլիսը գրաւելէ ետք, հազարաւոր հայեր եկած եւ հաստատուած են հոն: Թուրք սուլթանը հայ ականաւոր անձնաւորութիւններու բնակարաններ տուած է քաղաքին մէջ: Ըստ 1478-ի Մեվլանա Մուհիթտինի եւ Մահմուտ Չելեպիի վիճակագրութեանց, հայերը քաղաքին մէջ կը հաշուէին 372 տուն, բացի 384 գարամանցի հայոց տուններէն, 8951 մահմետական տուն, 3151 յոյն տուն, 267 քեֆեցիի տուն եւ 31 գնչուի տուն (էջ 21):

Բիւզանդական կայսրութեան անկումէն ետք՝ 1453-ին եւ յաջորդող տասնամեակներու ընթացքին գոյացաւ հայկական գաղթօճախ: Հայութիւնը կազմեց որոշ առանձին ազգ, դաւանանք, նկարագիր եւ խառնուածք ունեցող հաւաքականութիւն եւ 17-րդ դարու առաջին քառորդին հայերը Կ. Պոլսոյ մէջ ճանչցուեցան իբրեւ առանձին միլէթ (ազգային հաւաքականութիւն), Օսմանեան Պետութեան այլ միլէթներու շարքին:

Հայ առեստրականներ Կ. Պոլսոյ մէջ բացի քաղաքին եւ երկրին պետքերը հոգալէ, օսմանեան բանակին պարենային եւ այլ ապրանքներով մատակարարելու գործին լծուած էին: Այդ առեստրականները մենաշնորհի իրաւունք ստացած էին պետութենէն, որոշ ապրանքներ ներածելու, արտածելու կամ վաճառելու համար: Հայ մեծահարուստ դրամատէրերու մէջ յայտնի էին մաքսատուներու հայ տնօրէնները, որոնք կը մրցէին նոյն պաշտօնով հրեայ մեծահարուստներու հետ: Անոնցմէ էին Հալէպի մէջ Խոճա Պետիկը, եղբայրը՝ Խոճա Սանոսը Կարինի մէջ, հայազգի Անտոն Չելեպիի Զմիւռնիոյ մէջ եւ եղբայրը Խոճա Հասան, որ իսլամացած ու թրքացած էր:

Խաչատուր Դադայեան Կ. Պոլսոյ հայոց հարստութիւններուն մասին մանրամասն նկարագրութիւն տալէ ետք կ'անցնի Ատաբազարի, Ատանայի, Աղեքսանտրէի, Ակնի, Ամասիոյ, Զմիւռնիոյ եւ Կեսարիոյ ու այլ քաղաքներու տնտեսական ոլորտին մէջ հայոց նուաճած յաջողութիւններուն ու անոնց հարստութիւններուն մասին կը խօսի: Ատաբազարի հայոց տնտեսական կացութեան մասին ան կ'ըսէ. «Ատաբազարի հայը հարկադրուած չէր ապրուստ հայթայթելու համար Կ. Պոլիս գաղթելու: Ան աշխատասէր էր ու ի վիճակի հնարաւորինս արդիւնք քաղել իր շռայլ հողից» (էջ 36): Ապա կ'աւելցնէ, թէ 1915-ին սկսած Հայոց Ցեղասպանութենէն առաջ Ատաբազարի մէջ կային 165 հայ վաճառականներ:

Խաչատուր Դադայեան կ'ըսէ, թէ Ատանայի մէջ 1915-էն առաջ կ'ապրէին մօտ 175 հազար հայեր, երբ Կիլիկիոյ ընդհանուր բնակչութեան թիւն էր 268 հազար (էջ 40): Ատանայի մէջ գոյութիւն ունէին 29 խաներ կամ հիւրանոցներ, 7 բամպակի գործարաններ եւ 10 գտարան ու կաշիի գործարաններ: «Ասոնց մէջ հայ առեստրատնտեսական գործունէութիւնը առաջնային ու գերիշխող էր (էջ 42) եւ կ'աւելցնէ. «Ամբողջ Կիլիկիայում, մանաւանդ Ատանայում, արհեստները, առեստուրը եւ արտադրութիւնը գտնուում էին քրիստոնէաների ձեռքում, իսկ վաճառականական դասի ճնշող մեծամասնութիւնը հայ էր: Թուրքերն ընդամենը մի քանի արհեստներով էին զբաղուում» (էջ 43): Երբ խօսքը Ատանայի մասին է, կարելոր է յիշել 1909-ի թրքական վայրագութիւններուն պատճառով հայոց հասած



վնասներուն տարողութիւնը, ան կ'ըսէ. «Բացի հազարաւոր հայոց հոգիներու կորուստէն, Ատանայի մէջ հայկական տուն, շուկայ եւ ազգային հարստութիւն գրեթէ չէր մնացած: Խանութներն ու բնակարանները կողոպտելէ, թալանելէ վերջ այրած լմնցուցած են ամբողջովին: Մուշեղեան դպրոցն ու անոր նոր շուկան, որ դէպքերուն սկիզբը ազատած էին հրդեհներէն, այրուեր մոխրացեր էին, իրենց մէջ ապաստանած հարիւրաւոր էակներ ածխացնելով» (էջ 51):

Գալով Աղեքսանտրէի հեղինակը կ'ըսէ, թէ տեղւոյն հայերը ունէին դպրոց մը, եկեղեցի մը եւ առաջնորդարան: Քաղաքին հայերը վաճառականութեամբ եւ յանձնակատարութեամբ կը զբաղէին: Կային 41 վաճառատուներ, 300 կրպակներ, 14 իջեւաններ, 2 գինետուն եւ 13 ճաշարաններ (էջ 56):

Խաչատուր Դադայեան Այնթապի հայոց մասին կ'ըսէ. «Այնթապի հայերը տնտեսական փայլուն եւ բարեկեցիկ վիճակ ունէին: Անոնք ուշիմ էին, ճարպիկ, ճարտար, աշխատասէր եւ ժամանակի յառաջդիմութեան ոգին ընկալող: Քաղաքին գրեթէ ամբողջ առեւտուրը հայոց ձեռքն էր, ինչպէս նաեւ արհեստագործական եւ արտադրական ասպարէզները: Այնթապի հայ վաճառականներ առեւտրական տուներ էին հիմնել անգամ Եգիպտոսում եւ այլուր: Այդպիսիներէն էին Նազարէթեան եղբայրները, Լէյլակեանները, Պարսումեաններն ու Յովհաննէս Քիրքճեանը» (էջ 74):

Անգարայի հայերը մօտ տասը հազար հոգի կը հաշուէին 1915-ին, Հայոց Ցեղասպանութենէն ճիշդ առաջ: Անոնց մեծամասնութիւնը հայ կաթողիկէներ էին ու թրքախօս: Խաչատուր Դադայեան կ'ըսէ. «Անկիւրիոյ հայերը վաղեմի ժամանակներից, իբրեւ եւրոպական երկրների հետ առեւտրական գործառնություններ ունեցող հարուստ վաճառականներ կամ պետական պաշտօնեաներ էին, լինէր կաթոլիկ, լուսաւորչական թէ աւետարանական համայքներից: Հայերը կը բնակէին քարակերտ եւ կղմիտրածածկ տանիքներով տուներու մէջ եւ ունէին մաքուր փողոցներ» (էջ 81):

Վանայ լիճի հիւսիսային ափին վրայ գտնուող Արճէշ աւան-քաղաքի հայոց տնտեսական հարստութիւններն ալ ներառուած են այս ուսումնասիրութեան մէջ: Թէեւ հայերը ընդհանուր 1500 տուն հաշուող այս քաղաքին մէջ փոքրամասնութիւն էին, սակայն ունէին երկու եկեղեցի: Արճէշի հայերը վաճառականութեան մէջ շատ յառաջացած էին, կ'ըսէ հեղինակը (էջ 93): Իսկ Աֆիոն Գարահիսարի հայոց հարստութեան մասին հեղինակը կ'ըսէ, թէ շատ մեծ էր եւ կային հայ կալուածատէրեր ու դրամատէրեր, որոնք մեծ հարստութիւն դիզած էին (էջ 97):

Խաչատուր Դադայեան ի շարս այլ քաղաքներու եւ աւաններու կը քննարկէ Բաբերդի, Բալուի, Պրուսայի, Երզնկայի, Զեյթունի, Թումարգայի, Կեսարիոյ, Մալաթիայի, Կեմերէկի, Մերսինի եւ Սեբաստիոյ հայոց լքեալ հարստութիւնները (էջ 97-406):

Գիրքին էջ 411-449-ի մէջ «Մարդիկ-Ֆինանսավարկային Հարստութիւններ, Արտադրական Ձեռնարկութիւններ Եւ Տնտեսական Միութիւններ» խորագրին տակ յաւելեալ տեղեկութիւններ կը տրուին երկրին մէջ հայոց տնտեսական գործունէութեան եւ աշխուժութեան մասին:

Հայոց հարստութիւններու մասին լաւ գաղափար մը կազմելու համար կարելոր հատուած մը կը ներկայացուի Արմէն Դարեանի խմբագրած «Պատմագիրք Եոզկատի Եւ Շրջակայից (Գամիրք) աշխատութեան էջ 54-55էն.

«Եոզկատում պատմում են թէ Օհան Չորպաճին ժամանակ առ ժամանակ հանում էր իր ոսկիները, տաք օճառով լուանում, ապա կրկին պահում չիքիզուող պահարանում, որ գտնուում էր ինչ-որ նկուղում: Ոչ-մահմետականի նմանօրինակ հարստութեանն ու ազդեցութեանը նախանձող որոշ թուրքեր ամբաստանագրեր են ուղարկում Գաղատիայի նահանգապետին՝ Չորպաճին մեղադրելով հակապետական գործունէութեան մէջ: Նահանգապետը ընթացք է տալիս պարսաւագրերին եւ համապատասխան գրութիւն է

ուղարկում Կ. Պոլիս: Բարձր Դուռը պաշտօնեայ է ուղարկում Եոզկատ՝ տեղում քննութիւն կատարելու: Երբ պաշտօնեան հասնում է քաղաք, Չորպաճին գնում է պանդոկ՝ ողջունելու, հետը տանելով մի մեծ պահարան:

- Բարի էք եկել, փաշա, ասում է.- խնդրեմ ընդունեցէք այս տեղական յիշատակը, որ ձեզ նուիրում է ձեր խոնարհ ծառան:

Փաշա-քննիչը պահարանին դուռը բացելով, մի պահ մնում է կարկամած ու ապշահար. այնտեղ էին գտնուում Պոլսում իր իսկ ձեռքով գրուած բազմաթիւ պարտամուրհակներ...

Որոշ ժամանակ անց Գադատիայի նահանգապետը պաշտօնանկ է արւում իր պաշտօնից անփութութիւն դրսեւորելու մեղադրանքով» (էջ 417):

Խաչատուր Դադայեանի գիրքին էջ 474-501-ի մէջ կը գտնենք «Գովազդներ» խորագիրով՝ ատենին մամուլին եւ պաստառներու վրայ սփռուած առեւտրական ծանուցումներ, որոնց կը յաջորդէ «Բացատրական Բառարան Ապրանքատեսակների, դրամական կշռի, վարչական միաւորների եւ գրքում գործածուած այլ եզրերի» բաժինը: Գիրքին էջ 501-505-ի վրայ հեղինակը տեղադրած է օգտագործուած աղբիւրներու ցանկը:

Խաչատուր Դադայեանի այս աշխատութիւնը կարելուք բաց մը կը գոցէ հայոց լքեալ գոյքերու ուսումնասիրութեան առնչութեամբ, որ Լեւոն Վարդանի վերոնշեալ գործէն մօտաւորապէս հինգ տասնամեակներ յետոյ կատարուած անհրաժեշտ աշխատանք մըն է այս կարելուք բնագաւառին մէջ:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՐԹԸ ԿԱՍԵՅՈՒԱՐ, ԻՍԿ

ԱՆՀԱՆԴՈՒԹՈՂՈՒԹԵԱՆԸ՝ ԱՄՐԱՅՈՒԱԾ ԵՒ ԵՐԿԱՐԱԶԳՈՒԱՐ

Պարոյր Յ. Աղպաշեան



Եթէ ըսենք, թէ հայութիւնը դարձած է «անգլուխ», երբեք պետք չէ զարմանալ:

Եթէ մտածենք, թէ հայութիւնը այն չէ, ինչ որ էր անցեալին, երբեք չհաւկուրանանք:

Եթէ արձանագրենք, որ հայութիւնը հեռացած է իր իսկական դիմագիծէն, երբեք չտխրինք:

Եթէ բարձրաձայնենք, որ հայութիւնը մոլորած է իր ինքնութենէն, երբեք չողբանք:

Եթէ հրապարակենք, որ հայութիւնը խորթացած է

իր էութենէն, երբեք չհեծկլտանք:

Արդեօք սխալա՞ծ կ'ըլլանք կամ անիրաւուած կ'ըլլանք նման դիտարկումներով զայն համաչափելու կամ արժեւորելու, այնքան ատեն որ՝ խօսքը կը վերաբերի ՀԱՅՐԵՆԻՔԻՆ, այն հայրենիքին, որուն երթը սկսած է ականուիլ ու օտարուիլ:

Բայց, այդ հայրենիքը, իր աշխարհիկ ու հոգեւոր բաղադրութիւններով, իր ներկայի եւ ապագայի տեսիլքներով, իր կառուցային հիմքերով ու տուեալներով, իր ազգային-հայրենական չափանիշներով, կրցա՞ծ է իր գոյութիւնը երաշխաւորել, կրցա՞ծ է իր երթուղին ապահովել, կրցա՞ծ է իր ինքնակամութիւնը ցուցաբերել, թե՞ ոչ, ամէն ինչ ձգուած է պատահականութեան, անթափանցիկութեան, պատեհապաշտութեան ու մթամտածութեան, միանգամայն:



Լա՛ւ, այս մակընթացութիւնը, անկումայնութիւնը, անճարակութիւնը եւ ընդհանրապէս թափթիածութիւնը մինչեւ ո՞ր կրնայ երկարիլ եւ մինչեւ ե՞րբ կրնայ շարունակուիլ, երբ արար-աշխարհ մեզ կը դիտէ, կը հետեւի մեր ճամարտակութիւններուն, չըսելու համար, կը խնդայ մեր վրան, կը հեզնէ մեզ, կ'իսնուտէ, կը շահագործէ, կը խծբծէ, իսկ մե՞նք, ի՞նչ կ'ընենք, Բացի պոչիկութենէն, միմոսութենէն, խամաճիկութենէն եւ այլանդակութիւններէն: Աշխարհիկ կեանքը փճանալու վրայ է, անբնականացած ու համարեա անդամալուծուած ըլլալու վտանգին առջեւն է:

Պետական կառոյցները անկայունացած են, խեղաթիւրուած, արատաւորուած եւ սեփականացուած:

Դատական համակարգը կողմնակալուած ու հեղինակազրկուած է, փետրաթափուած՝ իր դերկատարութեան ճշգրիտ ուղղութենէն:

Հոգեւորական կարգը ձեւափոխուած ու չարափոխուած է, համապատուած ըլլալով զանազան փշաթելերով ու պատնէշներով:

Հասարակութիւնը խելակորսուած ընթացքի ու սահանքի մէջ է, որովհետեւ, ամէն ոք, շրջանակ թէ կողմ, իր հաշիւով եւ ակնոցով կը փորձէ զայն դիտել կամ արժեւորել:

Արդի՞ւնք:

Խառնիճադանճ ու քառս:

Թոհուրոհ ու խուժանութիւն:

Այս գեհէնը, դժո՛խքը, գոր կ'ապրի Հայաստանը, նաեւ հայութիւնը, երբեւիցէ ո՞ր տեսնուած է եւ ե՞րբ՝ տնօրինուած:

Մեր խօսքը օտար հրոսակներու ու բռնատէրերու մասին չէ, այս պարագային, այլ՝ նոյնինքն հայրենական տարածութենէն ու հայկական ոլորտներու սահմաններէն ներս, որ 1991էն ի վեր կը գործադրուի, կը խաչակրուի, կը շրջագայուի ու կը բոլորուի հայոց «փոքր ածու» հայրենիքին վրայ եւ անոր եկնականաւորի հորիզոնականի երկայնքին:

Այս բոլորին մեղաւորը ո՞վ է, որո՞ւն վրայ կարելի է յանցանքը ձգել, Բայց, ատոնց պատասխանը ստանալու համար, ինչո՞ւ ուրիշներ փնտռել եւ զանոնք լոկ ամբաստանել, երբ անոնք կը գտնուին, ոչ միայն հեռաւոր ափերու վրայ, այլ՝ ՀԵ՛ՆՑ, իր պարունակին եւ իր միջավայրին մէջ:

Ի վերջոյ, այդ երեւոյթները հայելիի պայծառութեամբ ու տեւողութեամբ, կը փայլին ամէն տեղ եւ ամենուր, միայն, պէտք է սուր աչք ու հասուն դատողութիւն, հաւատալու մերկ ու բոլակի իրականութեան, թէկուզ, համեստօրէն կամ... անամօթաբար:

Եթէ Հայաստանի Ա. Հանրապետութիւնը ձախողեցաւ, ատոր պատասխանատուութիւնը, հետաքրքրական է, մինչեւ հիմա, ոչ ոք քննարկեց, ընդունեց զայն, այլ միայն աջ ու ձախ զրպարտութիւններ ու ցեխարձակումներ արձակուեցան, մնաց որ, ըստ պատմագրութեան, օրուան պարագլուխներն իսկ համոզուած էին, որ նման հիւանդկախ ու հիւանդադէմք անկախ (՞) պետութիւն մը կրնա՞յ գոյատեւել:

Խելացի եւ աշաւուրջ մօտեցում մը, որ յատենի Հայաստանը փրկեց նոր Օսմանեան նուաճումէ մը, եղաւ Բ. Հանրապետութիւնը, Խորհրդային Հայաստանի կազմութեամբ, իսկ այսօ՞ր, ի՞նչ է իրավիճակը եւ ո՞ր կը գտնուի «պուճուր» Հայաստանը, ո՞ր աքցանի տակ է եւ որո՞ւ դրոշի տակ կը ծածանի:

Հարցում-հարցումներ-հարցականներ, որոնք ի՞նչ կրնան տալ Հայաստանի ինքնիշխանութեան յարատեւման ու հզօրացման, երբ ամէն ինչ կը թաւալի անորոշութեան, անտեղեկութեան եւ խաւարամտութեան, մութ ու ծուռ արահետներուն մէջ:



Աւելին. եթէ վարչապետ մը, անխոհեմաբար ու կարճատեսօրէն կը յոխորտայ, թէ ինք միայն Հայաստանի վարչապետն ու պատասխանատուն է, իսկ մեծամասնութիւն կազմող սփիւռքահայութիւնը, փաստօրէն կը նկատուի... օտա՞ր եւ անձանո՞թ:

Սակայն, վայրկեան մը, եթէ միայն հայաստանի վարչապետն ու պատասխանատուն է, նախ այդ իրաւունքը ուրկէ՞ ստացած է եւ ո՞վ շնորհած է իրեն, 2018ի «Թաւշեայ յեղափոխութիւն»ը, երբ անիկա ծնունդ առաւ օրհնաբեր մաղթերգը, շուտով յանգելու համար հաշմանդամութեան, այնքան ատեն, որ, ոչ միայն իր բարեկարգումները չտնօրինուեցան, այլեւ՝ կարելի անկարելիութեամբ մը հեռացաւ իր հօտէն, իսկ սփիւռքը միշտ փորձեց պահել մոռյալ ստուերի ու լուսանցքի վրայ:

Եթէ, առ այդ, սփիւռքը ո՛չ ուղղակիօրէն, ո՛չ ալ անմիջականօրէն միջամուխ չեղաւ հայրենական բարդ ու խոցելի իրադարձութիւններուն, գիտակցօրէն ու հասկնալիօրէն, իսկ երբ «հերթ»ը հասաւ եկեղեցի-իշխանութիւն բացայայտ հակամարտութեան, իր դատապարտական ու միջամտական փոխդարձ մօտեցումներով, արդէն սփիւռքը չէր կրնար անտարբերօրէն նայիլ կամ հետեւիլ զարգացումներուն, հետեւաբար, իր տեսակէտը ու պատկերացումը ուզեց յստակացնել, Հայաստանեայց Առաքելական եկեղեցւոյ նկատմամբ, իր խօսքն ու հաստատումները հրապարակելով, որովհետեւ, որքան ալ արդարացումներ հնչեն, որ թիրախը եկեղեցին չէ, այլ՝ գահակալը, ատոնք ոչ տեղին են, ոչ ալ համոզիչ, պարզապէս անոր համար, որ եկեղեցին ինքնուրոյն եւ ինքնադէմ հոգեւոր կառոյց է, ուր աշխարհականութիւնը եւ քաղաքականութիւնը (իմա՝ պետականութիւնը), իրաւունք չունին զայն խաչաւորելու ու խաչակրելու:

Հայութիւնը, ո՛չ կարիքը, ո՛չ օժանդակութիւնը եւ ո՛չ ալ արտօնութիւնը ունի դուրսէն ապսպրուած հրահանգներ ստանալու ու միջնորդներու լսելու, որոնք, անտարակոյս, ոչ միայն ոչինչով կրնան նպաստել, այլեւ՝ աւելիով կը խորացնեն վիհը, հայ եկեղեցին պառակտելով, ուստի, միակ ելքն ու բուժումը կը գտնուի հայութեան մօտ, այն եկեղեցիին, որ դարեր շարունակ պետականութեան դէր ստանձնեց եւ իշխանաստիքութեամբ վերաբերուեցաւ «անտէր» հայութեան հետ:

Խոհեմութիւնը ու հեռատեսութիւնը, լրջախոհութիւնը եւ իրատեսութիւնը կը պահանջեն, որ եկեղեցին մնայ իր սահմաններուն մէջ, նոյնպէս ալ՝ իշխանութիւնը, առանց թղթածրարները ոտնակոխ ընելու եւ գերագոյն իրաւունքները ձեւափոխելու կամ պղտորելու:

Եթէ այս պարզ, սկզբունքային ու հեռանկարային հրամայականութիւնը շարունակուի չարափոխել կամ ենթարկել բռնամիջոցներու, բոլոր կողմերն ալ պիտի տուժեն, ամենէն առաջ՝ Հայաստանն ու համայն հայութիւնը, իսկ դէպքերու մագլցումները կը յուշեն ու կը հաստատեն, որ հայրենիքին ու ժողովուրդին ճակատագիրները կրնան, աւելի քան աղիտաբեր դառնալ, իրենց ապագայի... չգոյութեամբ:

Թերեւս աստոր համար ալ, կը համարձակինք գոռալ. «Անկախութեան երթը կասեցուած է, իսկ անհանդուրժողութեան երկարումը՝ ամրացած ու բազմացած»:

Յոռետեսական եւ յուսալքական մտորումներով չենք յաւակնիր վարակուիլ ու վարակել, բայց, երբ սուր հարցերը կը դիտուին ու կը խորաչափուին նման նժարներով, ուրիշ ի՞նչ բացատրութիւն կրնանք տալ տեղի ունեցող խոշորացուցային եղելոյթներուն:

(Պէյրութ)

24/7/2025

ԼՐԱԳՐՈՂՆԵՐ «ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ»

Լիւսի Տօքմէճեան, Երեւան, 23 յուլիս 2025, ԳԵՂԱՐԴ



Խորագիրը չի վերաբերիր 1985-ին հիմնադրուած եւ այդ թուականէն գործող «Լրագրողներ առանց սահմաններու» (ԼԱՍ) միջազգային ոչ-կառավարական կազմակերպութեան, որուն առաքելութիւնն է հետեւիլ լրատուամիջոցներու ազատութեան եւ լրագրողներու պաշտպանութեան ամբողջ աշխարհի մէջ, պայքարիլ գրաքննութեան դէմ եւ ազատ արձակել տալ իրենց մասնագիտական գործունէութեան համար բանտարկուած լրագրողները:

Ի գիտութիւն ընդունինք, որ ԼԱՍ-ը, հիմնական ուշադրութեան տակ պահելով մամուլի ազատութեան խնդիրը, ամէն տարի կը հրապարակէ աշխարհի աւելի քան 160 երկիրներու մէջ խօսքի ազատութեան ցուցակը: Ան արձանագրած է, որ տարուէ տարի ամբողջ աշխարհի մէջ լրատուամիջոցներու ազատութիւնը նահանջ կ'ապրի:

Գրութեանս խորագիրը կը վերաբերի Հայաստանի մէջ գործող որոշ լրագրողներու, որոնց մտքի «փայլատակումը» անձայրածիր է: Անոնք կը կարծեն, թէ իրենց թոյլատրուած է ներթափանցել ուրիշներու ազատութեան մէջ: Անոնք կը հաւատան, որ իրենց մասնագիտութեան բերումով իրաւասութիւն ունին հատելու բոլոր՝ արտօնուած եւ չարտօնուած կարմիր գիծերը: Անոնք ոչ միայն կ'աղաւաղեն անաչառ լրագրութիւնը, այլեւ նոր մրցանիշերով անընդհատ կը նուագեցնեն իրենց առաքելութեան մակարդակը:

Հետեւելով հայաստանեան լրահոսին, աչքառու կը դառնայ երեք երեւոյթ.

1) Յաճախակի կը հանդիպինք այնպիսի լուրերու, որոնք կարծես ուղղակի պատճէնուած են օտար աղբիւրներէ՝ իրենց ոչ-հայամէտ արեւելումներով: Ճիշդ է, որ քաղաքական վերլուծութիւններն ու լրատուութիւնը նկատի պէտք է ունենան եւ լուսարձակի տակ առնեն աշխարհաքաղաքական իրադարձութիւններն ու անոնց վերաբերեալ հրապարակումները, պէտք է սրատեսութիւն եւ սուր հոտառութիւն ունենան կարդալու անոնց տողատակերը եւ բացայայտելու թաքնուած կամ քողարկուած ուղերձները, սակայն ինչքանո՞վ ընդունելի է հիմք վերցնել ՄԻԱՅՆ օտար լրատուամիջոցներու թեզերը, մաղէ չանցնել զանոնք եւ անտեսել Հայաստանի Հանրապետութեան դիրքորոշումներու մասին պետական-պաշտօնական մարմիններու յայտարարութիւնները: Արդէն չափազանց անհամ դարձած է մարդոց ուղեղներուն սղոցումը նոյն ներմուծուած թեմաներով, որոնք բազմիցս հերքուած են կամ որոնց հակառակը փաստուած է: Նոյն ծեծուած հարցադրումները, նոյն բառապաշարը, նոյն թիրախային լսարանը: ... Քիչ չեն լարուած պուպրիկներու նմանող եւ թելադրանքով աշխատող լրագրողները:

2) Յաճախ կը հանդիպինք նաեւ յօրինուած պատմութիւններու՝ երբեմն այդ հեքիաթներուն մէջ ներգրաւուած գտնելով նոյնիսկ օտար դէմքեր կամ հիմնարկներ, մինչեւ որ օտար կառոյցը ստիպուի միջամտել ու հերքել բերանի ծամօն դարձած կեղծ նիւթը: Որոշ անձնաւորութիւններ կամ քաղաքական կազմակերպութիւններ քարկոծելու մոլուցքով, գիտութեամբ թէ անգիտութեամբ կիրառուող այս «ռազմավարութիւնը» առաջին հերթին կը



վնասէ մեր հայրենական պետութեան վարկին: Կարգ մը լրագրողներ անհիմն ու վնասակար նախադասութիւններ կամ պատմութիւններ կը նետեն հասարակութեան մէջ՝ անոնցմով ստեղծելով աղմուկ, խառնաշփոթ եւ վախ: ... Շատ կան արհեստավարժութենէ մղոններով հեռու լրագրողներ, մեր հանգուցեալ թրքախօս դրացին պիտի ըսէր՝ «աժան դազէթաճիներ»:

3) Գիտենք որ սովորաբար լրագրողը պէտք է նեղի մատնէ քաղաքական գործիչները, բայց անոր հարցումները, ամէն պարագայի, պէտք է պահպանեն արհեստավարժութեան մակարդակն ու բարոյականութեան նուազագոյն սահմանները: Շատ բնական է, որ քաղաքական որոշ արտայայտութիւններ ու կեցուածքներ վստահութիւն չներշնչեն քաղաքացիներու հատուածի մը կամ ըստւո՞ր գործնական ապացոյցներու կարիք ունենայ, սակայն մէկ կողմին ըսածը հալած իւղի պէս ընդունիլը, կամ հակառակը՝ անոր ոչ մէկ ըսածին հաւատալը կամ նախապաշարումի հետեւանք է, կամ քառակուսի մտածողութեան: Անաչառ լրագրողը պիտի լուսաբանէ եղելութիւններուն բոլոր երեսակները, պիտի ներկայացնէ թէ՛ լաւը եւ թէ՛ վատը, քարացած դիրքորոշում պիտի չունենայ, որով թեմայէն հասկցող-չհասկցող մարդոց մէջ կրնայ ստեղծել անբուժելի անվստահելիութիւն մը, ինչին ականատեսն ենք յատկապէս վերջին տարիներուն:

Արհեստավարժ լրագրողին համար նաեւ աններելի է չմշակուած հարցումներ վերարտադրելը: Լրագրութիւնը նուրբ եւ ազդու արուեստ է, որ կը պարտադրէ գաղափարները անընդհատ յղկել եւ բառերը մշտապէս վերամշակել: Կան լրագրողներ, որոնք պատրաստ են նոյնիսկ ամէն տեսակ անքաղաքավար ձեւերու դիմելու. անոնք չեն վարանիր քաղաքական գործիչներու խօսակցութեան ժամանակ զարտուղի վիճակներ յառաջացնելու՝ մանկական անկարգութեամբ աղմկելով, «ձեր մահուան ժամանակ ո՞վ պիտի արտասուի ձեր վրայ»-ի նման լկտի ու սնամէջ հարցումներ հնչեցնելով: Ոմանք կը համարձակին զԱստուած հեգնանքի ենթարկելու, Հայրենիքի բարերարը սադրելու եւ զայն «իր հագուստներէն հանելու», իւրաքանչիւր երեւոյթ անկապ քաղաքականացնելու, նոյնիսկ բարոյագրկութեան գազաթնակէտին հասնելով՝ վարչապետին ուղղուած իրենց հարցումը իրենց չիմացած թրքերէնով ձեւակերպելու: ... Կան անգրագիտութեան մէջ վարպետացած լրագրողներ:

Վերջերս ճամբան զիս կանգնեցուց լրագրողուհի մը՝ զգուշացնելով, որ ժամանակէս քիչ մը պիտի առնէ, քանի որ կը փափաքի երկրի վիճակին հետ առնչուած քանի մը հարցումներ ուղղել: Առաջին հարցումն էր. «Ո՞նց էք գնահատում Հայաստանի ներկայ վիճակը»: Երբ իրեն համար շատ բացասական չթուաց պատասխանս, բերանը ծամածռելով տուաւ երկրորդ հարցումը. «Երկրին մէջ բարելաւում նկատո՞ւմ էք»: Երբ մասամբ դրական պատասխան ստացաւ, շնորհակալութիւն յայտնեց ու հեռացաւ: Արդեօք իր սպասած խտացած մութ գոյնի պատասխաններու չգոյութիւնն էր հարցազրոյցը շուտ աւարտին հասցնելու պատճառը: Գուցէ:

Դիտարկելով Հայաստանի մէջ լրագրողներուն մակարդակը, կ'եզրակացնենք, որ հայրենական լրագրութիւնը մահաքունի մէջ է: Թէեւ, ըստ ԼԱՄ-ի, «Մամուլի ազատութեան



համաշխարհային ցուցակ – 2025»ին մէջ Հայաստանը բարելաւած է իր դիրքերը՝ 2023 թուականի 49-րդ եւ 2024 թուականի 43-րդ դիրքէն յայտնուելով 34-րդ դիրքի վրայ, բայց լրագրողները դարձած են աւելի գոեհիկ, աւելի անկիրթ, աւելի սանձարձակ, յոռեգոյն իմաստով՝ առանց սահմաններու:

Աւելին, եթէ ուզենք երկու խօսքով ներկայացնել «լրատուական Հայաստանը», այնպէս կը թուի, թէ ՀՀ-ի մէջ չկան տնտեսութեան, գիւղատնտեսութեան, կրթութեան, առողջապահութեան, բնապահպանութեան, ուժանիւթի, բանակին մէջ բարեփոխումներու խնդիրներ: Փաստօրէն, լրագրողները կարծես չեն հետաքրքրեր այն իրական հարցերը, որոնք ամէն օր ու ամէն վայրկեան կ'ազդեն ժողովուրդին կեանքին վրայ:

Տարիներու թաւալքին, գիտատեխնիկական յառաջընթացին, հնարաւորութիւններու եւ գործիքակազմերու բազմացման հետ երանի թէ Հայաստանի մէջ բարձրանար լրագրողական մակարդակը: Ցաւօք, իրականութիւնը հակառակն է՝ յետքայլ եւ մակարդակի անընդհատ ցածրացում, բեւեռացում լրատուամիջոցներ եւ ատելութեան խօսք տարածող լրագրողներ: Այս վիճակը ինծի մտածել կու տայ, թէ չկա՞յ միջազգային վստահելի կազմակերպութիւն մը, որ ժամանակ առ ժամանակ առարկայական վերաորակաւորման ենթարկէ լրագրողները ու չյաջողողը, լրագրողի անյարիր պահուածք ունեցողը զրկէ լրագրողի իր իրաւասութիւններէն: Սա խախտո՞ւմ է լրագրողներու ազատութեան: Բայց չէ՞ որ կարելոր է ունենալ կիրթ, գրագէտ, իրենց սահմանները չանցնող ազատ լրագրողներ, որոնք եւս հայելին են մեր մշակոյթին, մտածողութեան, քաղաքակրթութեան եւ զարգացումածութեան:

Եւ պէտք է միշտ յիշել ու յիշեցնել, որ ազատութիւնները, անոնց շարքին՝ լրագրողական ազատութիւնը, պայմանաւորուած ու սահմանափակուած են պարտաւորութիւններով: Այլ կերպ չի կրնար ըլլալ:

1958-Ի ԵՂԲԱՅՐԱՍՊԱՆ ՈՃԻՐՆԵՐՈՒ 67-ՐԴ ՏԱՐԻՆ

Բարգէն որդի Բարգէնի Պոյաճեան, Թորոնթօ, 26 օգոստոս 2025

Նորէն օգոստոսի 26-ն է, 1958-ի եղբայրասպան ոճիրներու 67-րդ տարին եւ նորէն անտարբերութիւն. ո՛չ մէկ պատրաստակամութիւն Եկեղեցիով եւ կուսակցութիւններով ներողութիւն խնդրելու գոհերու ծնողներէն, եղբայրներէն ու քոյրերէն, այրիներէն ու որբերէն:



Մենք՝ հայերս վերածուած ենք ՊԱՐՏՈՒԱԾ ամբոխի: Մեր նկատմամբ օտարներու բոլոր անարգանքներուն նկատմամբ անտարբեր, մեզ կը համոզեն որ տկար, անհաշուետու ամբոխ մըն ենք, որ մենք չենք կրնար պահանջատէր ըլլալ, պէտք է օտարին



ստրուկ մնանք: Բայց... առիծ կը կտրինք իրարու նկատմամբ: Ի՞նչ ժառանգ պիտի ձգենք մեր սերունդներուն բացի պարտուածի հոգեբանութենէն: Ինչպէ՞ս, ի՞նչ երեսով անոնց պիտի բացատրենք, թէ ինչո՞ւ ձեր ձեռքերը արեան մէջ թաթխուած են եղբայրասպա՛ն ոճիրներուն թափուած հայկական արիւնով: Ինչպէ՞ս բացատրենք, թէ կը նախընտրէք կրել ամօթի խարանը ձեր ճակատին, քան գիտակցիլ կատարուածներուն ահաւորութիւնը, զոջալ, խոստովանիլ ու ապաշխարել: Չէ՞ որ բացի երկրայինէն, կայ նաեւ երկնայի՛ն հաշուեյարդար որմէ ոչ ոք կրնայ փախուստ տալ:

1958-ի եղբայրասպանութեան զոհ հօրս հինգ ոճրագործներէն չորսը կրեցին իրենց պատիժը տարբեր հանգամանքներու տակ, կարելի է ըսել՝ ամենադաժան կերպով: Անոնցմէ վերջինի կեանքի քաշքշոցին ակնատես եղայ Պուրճ Համմուտի հրապարակին վրայ: Հօրս այդ ոճրագործը, որ 1958-ին շատ հայորդիներ սպանած էր, ունէր շատ ողորմելի տեսք. տակը միզած էր, ոտքերուն եւ ձեռքերուն մէկ մասը անդամալոյծ, կը փորձէր քարշ տալ իր զարշահոտած մարմինը:

Ոճրագործներէն մէկ ուրիշը, որ նոյն ժամանակ մեր դրացիի որդին էր, ամիսներով գամուած մնաց անկողինին՝ տառապելով քաղցկեղէն: Դարման չունենալով իր տանջանքներուն աղերսեց վայրկեան առաջ սատկիլ:

Այսպիսիները պէտք չէ անմիջապէս սատկին, այլ շատ ծանր հատուցեն իրենց ոճիրներուն համար:

Համոզուած եմ թէ որեւէ մէկը իր գործած ոճիրներուն համար անպատիժ չի մնար: Կայ երկնային արդարութիւն, որ բոլոր անմեղ զոհերուն վրէժը լուծեց ու պիտի լուծէ շատ դաժան կերպով: Թող ոչ ոք կարծէ, թէ գլուխները աւազի մէջ մտցնելով պիտի ազատի հաշիւ տալէ եթէ ոչ նահատակներու ընտանիքներուն, ապա հաստատապէս՝ իր խիղճին առջեւ: Ո՛չ դուք, ո՛չ ալ ձեր սերունդները հանգիստ պիտի ունենան մինչեւ որ չզոջան, չամչնան եղբայրասպան ըլլալուն համար, իրենց մեղքերը չխոստովանին եւ ներողութիւն չխնդրեն:

Տարածաշրջանը կ'ենթարկուի հիմնական փոփոխութեան, շատ երկիրներ հաւանաբար վերանան կամ մասնատուին: Այս պագարին մէջ հայերս ալ ծախու դրուած ենք: Սակայն, ցաւօք, մենք պատրաստ չենք ձախողցնելու հայասպան ծրագիրները, քանի որ զբաղած ենք զիրար յօշոտելով:

Ուշքի՛ եկէք, տիկնա՛յք եւ պարոնա՛յք, ո՛վ դուք ղեկավար կոչուածներդ, եկեղեցական թէ աշխարհական: Վե՛րջ տուէք ազգի պառակտումին, թշնամանքի հասած աստելութեան, համախմբուեցէ՛ք ու զօրացէ՛ք, որ խաղալիք չդառնանք մեր թշնամիներուն եւ նոյնիսկ բարեկամներուն ձեռքին:

Լիբանանի 1958-ի եղբայրասպան նախճիրներէն 67 տարի ետք, ո՛չ մէկ բան եւ ո՛չ մէկը մոռցուած է: Երիտասարդ նահատակներուն ծնողներն ու այրիները եթէ այլեւս չկան այս աշխարհին մէջ, կան սակայն անոնց զաւակները, թոռներն ու ծոռները, միւս հարազատներն ու ընկերները: Անոնք միշտ պիտի սպասեն եւ պահանջեն ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆը:



Այո՛, կը յիշեմ եւ մի՛շտ պիտի յիշեմ ու մի՛շտ պիտի պահանջեմ: Այդ իմ ու ինծի նման որբացածներուն ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ ԻՐԱԽՈՒՆՔՆ Է:

ՏԵՍԱԿԷՏ

ԱՆՄԻԱԲԱՆ ՀԱՅՐ

Լիւսի Տեղափոխում, Երևան, 25 օգոստոս 2025, ԳԵՂԱՐԴ



Հայաստանի Հանրապետութիւնը կը գտնուի քաղաքական, տնտեսական եւ անվտանգային գուցէ աննախադէպ սպառնալիքներու դէմ-յանդիման: Զուգահեռաբար, երկիրը կը դիմագրաւէ նաեւ աւելի տխուր եւ կործանարար իրավիճակ մը՝ հայ ժողովուրդին անմիաբանութիւնը: Իրարու հանդէպ կան անվստահութիւն, կասկածամտութիւն, մեղադրանքներու տարափ: Ասոնք համատարած դարձած են ոչ միայն Հայաստանի մէջ, այլեւ Սփիւռքի ամբողջ տարածքին:

Վերոնշեալ սպառնալիքներուն դէմ միահամուռ պայքար մղելու փոխարէն, հայ ժողովուրդին վերնախաւը զբաղած է իշխանատենչ կռիւներով եւ պառակտիչ արտայայտութիւններով, իսկ սովորական խաւը կը կրէ այդ արտայայտութիւններուն աւերիչ ազդեցութիւնը, բոլորն լարուած է իրարու հանդէպ եւ կասկածանքով կը մօտենայ երկրին մէջ տեղի ունեցող իւրաքանչիւր իրադարձութեան: Ներքաղաքական մթնոլորտը թունաւորուած է, իսկ հանրային կարծիքը՝ փոխադարձ մեղադրանքներով եւ արհամարհանքով ապականուած:

Գեորգ Էմին իր «Զգոյշ խօսիր Հայաստանում» քերթուածին մէջ կը նշէ, թէ բաժան-բաժան եղած, անմիաբան հայր կը միաւորուի երբ կը սպառնայ թշնամին: Բայց այսօրուայ մեր համագգային պատկերը կը պարզէ լրիւ այլ տեսարան: Մենք պառակտուած ենք նոյնիսկ թշնամիին դէմ, նոյնիսկ երբ վտանգուած է մեր հայրենիքին վերջին մնացորդացը՝ Հայաստանի Հանրապետութիւնը, չգիտակցելով որ այդպիսով կը սատարենք մեր պետականութեան քայքայման եւ լրջօրէն կը սպառնանք մեր գոյութեան որպէս լիիրաւ պետութիւն:

Հայ ժողովուրդին մէջ գրեթէ բացակայ են այլախոհութիւն եւ կառուցողական քննադատութիւն երեւոյթները. կարծես թէ մէկու մը կամ դէպքի մը կա՛մ կողմ ես, կա՛մ՝ դէմ, կա՛մ համախոհ ես, կա՛մ՝ հակառակորդ: Սա տհասութիւն մըն է, որ վնասաբեր է ոչ միայն ազգային ու հաւաքական առումով, այլ նաեւ մեր անձնական յարաբերութիւններուն մէջ: Հայաստանի մէջ իւրաքանչիւր ձախողութիւն կամ բացթողում պատրուակ կը հանդիսանայ



մեղաւորներ փնտռելու եւ դաւաճանի պիտակ կ'պցնելու, փոխանակ առերեսուելու սխալներուն հետ, զանոնք վերլուծելու եւ անոնցմէ դասեր քաղելու: Քաղաքական բնագաւառը դարձած է զիրար ոչնչացնելու միտող հակամարտութեան թատերաբեմ, ստիպելով կռիւ տալու թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ճակատներու վրայ՝ ստեղծուած ճգնաժամերը կառավարելու համար: Սա չ'ենթադրեր համաձայն գտնուիլ քաղաքական բոլոր դիրքորոշումներուն հետ, բայց այն մթնոլորտը որ արդէն քանի մը տարիէ կը տիրէ հայրենաբնակ թէ սփիւռքի հայորդիներուն մէջ, հասած է սարսափելի մակարդակի, այն աստիճանի, որ կը թուի, թէ հայերը իրենք իրենց թշնամին են, իրարու հանդէպ ունին ո՛չ կարեկցանք, ո՛չ հասկացողութիւն, եւ թէ Հայաստանը երկիր մըն է, ուր ժողովուրդին արժանապատուութիւնը ոտնակոխուած է եւ ուր հնարաւոր չէ խաղաղ ու արժանավայել ապրիլ:

Ամէն ինչէն խնդիր սարքելու վատ սովորութիւնը մեզ դարձուցած է անհանդուրժող իրարու նկատմամբ: Եթէ համաշխարհային show business-ի երգչուհիի մը համերգը, ֆութպոլի խաղի մը կայացումը, ճանապարհի պոկուած ասֆալտը, յուշահամալիրի վերանորոգումը, հիւանդոտ ծառի մը հատումն ու նորով փոխարինումը եւ նմանատիպ բաներ զիրար քարկոծելու տեղիք կու տան, զիրա՞ր պիտի չբզկտեն քաղաքական տարբերութիւններու համար: Կառուցողական քննադատութիւնը ողջունելի է, բայց եղածը երբեք այդ չէ, եւ զիրար միայն մեղադրելը որեւէ լաւ բանի չի յանգեցներ. հարկ է զիրար լսել, կառուցողական երկխօսութիւն մշակել ու նպատակային գործել յանուն ընդհանրական շահերու եւ նպատակներու:

Միաբան ըլլալ չի նշանակեր նոյն ձեւով մտածել, այլ կը նշանակէ համախմբուիլ համահայկական նպատակներու շուրջ, Հայրենիքը դասել ամէն ինչէ վեր, հզօրացնել պետականութիւնը եւ ապահովել երկրին ու ժողովուրդին բարեկեցութիւնը: Հոս Սփիւռքը նոյնպէս ունի պատասխանատուութեան իր բաժինը: Հեշտ է թերացումները հեռուէն՝ մատնացոյց ընելը, հերոսութիւն չէ սխալները խոշորացոյցով դիտելն ու ամէն ինչ սեւցնելը՝ առանց զանոնք ուղղելու լուծումներ առաջարկելու: Փոխարէնը հարկաւոր է զօրակցութիւն ցուցաբերել Հայրենիքին: Իւրաքանչիւրս պարտաւոր է իր բաժին ներդրումն ունենալ անոր հզօրացման՝ հեռու մնալով պատրանքներէ ու ռոմանթիզմով յագեցած մօտեցումէ:

Հետեւաբար, պէտք է վերատեսութեան ենթարկենք մեր մտածելակերպը, խօսքն ու վերաբերմունքը: Մեր դէմ ցցուած արտաքին սպառնալիքներուն չափ մեզ կը վտանգեն նաեւ մեր պառակտումները, մեր անմիաբանութիւնն ու փառատենչութիւնը: Հայրենիքը միայն խօսքով ու երգով սիրելու համար չէ: Հայաստանը «La La land» մը չէ, այլ բազում դժոխքներու մէջէն անցած մեր հոգեհատորն է, որուն պէտք է միշտ գուրգուրանք, նամանաւանդ երբ հիւանդանայ, տկարանայ կամ սխալի, փոխանակ իր վրայ կոխկոտելու ու վերքերուն վրայ սեղմելու: Անհրաժեշտ են Հայրենիքին հանդէպ անմնացորդ յանձնառութիւն ու նուիրում, որուն անկարելի է հասնիլ առանց հրաժարելու մեր եսասիրութենէն, շահամոլութենէն, մեր մէջ բոյն դրած թարախոտ անմիաբանութենէն, առանց լիարժէք միաւորուելու եւ բոլորիս համայնական տան հանդէպ անշահախնդիր մօտեցում որդեգրելու:

Ա՛յս է մեր գլխաւոր հրամայականը այսօր եւ ... ընդմիշտ:

ՄԻԻՆԻՔԻ «ԶՐԱՀԱՊԱՏ ԳՆԱՑՔԸ». ԻՆՉՈ՞Ւ ԹՐԱՄՓԸ ԿԱՆՉԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՏՐԱԵՅՃԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ



Շատերը լրջօրէն սպասում են ԱՄՆ նախագահական նստավայրում Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան հարցի վերաբերեալ փաստաթղթերի ստորագրմանը: Սակայն միամտութիւն է հաւատալ, որ ԱՄՆ նախագահի նպատակը այս երկրների միջեւ հակասութիւնների կարգաւորման թեմայով որոշ փաստաթղթեր են: ԱՄՆ սենատորներից մէկն

արդէն շատ յստակ արտայայտուել է. Թրամփը տարածաշրջանի երկրներից ստացել է եւս մէկ ռեսուրս՝ իր «խաղաղութեան քաղաքականութիւնն» իրականացնելու համար: Եւ պատահական չէ, որ նա իր ծրագիրն անուանել է «Թրամփի միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման ուղին»: Նա յստակօրէն չի յիշատակել Հայաստանի եւ Ատրպէյճանի մասին՝ Նոպէլեան մրցանակ ստանալու համար: Այն, ինչ նրանք կը ստորագրեն միմիանց միջեւ, ոչ մէկին չի հետաքրքրում: Դա որեւէ կապ չունի նախատեսուած գործի հետ: Կարծում եմ՝ նոյնիսկ Հայաստանում շատերն արդէն հասկանում են դա:

Արդէն իսկ առկայ բազմաթիւ տեղեկատուական արտահոսքերը ցոյց են տալիս, որ ԱՄՆ-ում ստորագրուած ոչ մի փաստաթուղթ որեւէ կապ չունի միջազգային քաղաքականութեան իրողութիւնների հետ: Ի վերջոյ, ի՞նչ կարող է նշանակել Թրամփի ոճով խաղաղութեան ուղին: Նրա սկզբունքները դեռ չեն մոռացուել. «խաղաղութիւն ուժի միջոցով» եւ «Ամերիկան առաջին հերթին»: Նման սկզբունքները քիչ տեղ են թողնում խաղաղութեան սենթիմենթալ ձգտումների համար: Նման ձգտումներ կարող են գոյութիւն ունենալ այնպիսի երկրներում, ինչպիսին է Հայաստանը, բայց ոչ աշխարհի առաջատար տէրութեան համար, որը խոստովանել է, որ կորցրել է իր կշիռն ու ազդեցութիւնը աշխարհում: Եւ եթէ խաղաղութիւն ասելով նկատի ունենք ինչ-որ նոր աշխարհակարգ, ապա «Թրամփի խաղաղութեան ուղով» ամենահեշտն է պատկերացնել ինչ-որ «Խաղաղութեան զրահապատ գնացք»: Համապատասխանաբար, խաղաղութեան ամբողջ ուղին արդէն իսկ ներկայացւում է Միացեալ Նահանգների ամրապնդմանը տանող ուղիների ուժային մաքրման տեսքով: Այսինքն՝ ուղին ինքնին աւելի շատ նման է պատերազմի՝ Միացեալ Նահանգների հովանու ներքոյ խաղաղութիւն հաստատելու յոյսով:

Նաեւ ուշագրաւ է, որ Կովկասում Միւնիքի տեսքով համեղ կտոր «ստանալու» պահը նոյնպէս յարմար կերպով ընտրուեց: Հայաստանի իշխանութիւնները աղօթում են խաղաղութեան համար ցանկացած գնով, իսկ Ռուսաստանի եւ Իրանի կողմից շրջապատուած Ատրպէյճանը չունէր այլընտրանք, քան միանալ Հայաստանի կողմից հաւանութեան արժանացած ԱՄՆ նախաձեռնութեանը: Անհնար է դարձել, ինչպէս միշտ, դիմել Ռուսաստանին. Ռուսաստանը ինչ-որ կերպ զայրացած է: Թւում է, թէ Թրամփը ինչ-որ բան է խոստացել նաեւ Ռուսաստանին եւ Իրանին, որոնք վիրաւորուած են Ատրպէյճանից (մէկին՝ Ուքրաինայում, մէկին՝ Հորմուզի նեղուցում կամ որեւէ այլ տեղ):

Փաստն այն է, որ Հայաստանի տարածքի փխրուն եզրին՝ Միւնիքին, աչքը սեւեռելով՝ ձեւաւորուել է համաշխարհային մասշտաբի փոխազդեցութիւնների նոր հանգոյց: Ո՞վ կը գոյատեւի այնտեղ եւ ո՞վ կը պարտուի՝ ժամանակը ցոյց կը տայ: Սովորաբար գոյատեւում են նրանք, ովքեր կարողանում են մասնակցել նոր իրականութիւնների ձեւաւորմանը: Հէշտ չէ հասկանալ ժամանակակից միջազգային քաղաքականութեան տրամաբանութիւնը: Մենք

չպետք է մոռանանք, որ 1989 թուականից ի վեր աշխարհը գտնուում է աշխարհակարգի նախկին կառուցուածքի քանդման գործընթացում: Միեւնոյն ժամանակ, 20-րդ դարի քոլի տակ, երբ համաշխարհային տերութիւնների բոլոր գործողութիւնները ուղղուած էին նոր աշխարհակարգի կառուցմանը՝ ինքնիշխանութեան, ազգային պետութիւնների տարածքային ամբողջականութեան եւ մարդու իրաւունքների համընդհանուր սկզբունքների առաջնահերթութեամբ, այժմ առաջնահերթութիւնը բոլորովին այլ է: Մասնաւորապէս՝ միջազգային կարգի նոր կառուցուածքի ձեւաւորում՝ ինքնիշխանութեան, ազգային պետութիւնների տարածքային ամբողջականութեան եւ ժողովուրդների իրաւունքների հաշուին: Նման քաղաքականութեան սկզբունքները նոյնպէս անհասկանալի են: Արդէն նկատելի է, որ նման արմատական վերաբաշխման համար օրինականացւում են նախկինում օտար հասկացութիւններ՝ «պետական տարածքների վարձակալութիւն», «ժողովուրդների տեղափոխում», «պետութիւնների անեքսիա», «դեմոնտաժ»: Միեւնոյն ժամանակ, կոլեկտիւ (հաւաքական ԱԲ) անվտանգութեան մի ժամանակ սիրելի գաղափարը խրախուսելու սկզբունքը միայն գրգռում եւ անվստահութիւն է առաջացնում: Այսպիսով, ոչ ոքի պետք չէ շտապել. աւելի լաւ է մտածել այն մասին, թէ ինչպէս չշփոթել խաղաղութիւնը պատերազմի հետ:

Մանուէլ Սարգսեան

ԴԱՌՆԱԼ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԴԵՐԱԿԱՏԱՐ



Հարաւային Կովկասի հաղորդակցութեան ուղիներու զարգացումով հետաքրքրուած են տարածաշրջանին մէջ կարեւոր դերակատարութիւն ունեցող մեծ ու շրջանային բոլոր պետութիւնները՝ թէ՛ Ռուսաստանը, թէ՛ ԱՄՆ-ն ու ԵՄը, թէ՛ Պարսկաստանը, Թուրքիան, Հնդկաստանն ու Չինաստանը: Սակայն իւրաքանչիւրը իր

ռազմավարական շահերուն համեմատ ունի իր իւրայատուկ նախընտրութիւնը, ունի նաեւ այսպէս կոչուած՝ իր կարմիր գիծերը: Նոյեմբեր 9ի հրադադարի համաձայնութեան գլխաւոր նպատակը հաղորդակցութեան ուղիներու բացումն էր, այնպէս ինչպէս կ'առաջարկէ Հայաստանի կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը, որուն նեցուկ կը հանդիսանան Արեւմտեան պետութիւնները:

Վրաստան ու Ազերպայճան տարածաշրջանին մէջ արդէն ունին հաղորդակցութեան ուղիներու իրենց ցանցերը, զորս կառուցած են 2000ական թուականներէն, երբ հայկական իշխանութիւնները, այն ժամանակ դղեակներ կառուցելով ու հայրենասիրական ճառեր արտասանելով զբաղած էին, Հայաստանի անվտանգութիւնը ամբողջովին թողլով Ռուսաստանի բարի կամեցողութեան: ՀիւսիսՀարաւ մայրուղիի շինութիւնը առաջնահերթութիւն կը յայտարարուէր, սակայն գործնական քայլ չէր առնուէր այդ ուղղութեամբ, իսկ այդ ծրագրին դրամային յատկացումները կ'իրացուէին, այս կամ այն մասնակիցի կողմէ: Թէեւ ՀիւսիսՀարաւ մայրուղին օդի ու ջրի նման անհրաժեշտութիւն էր Հայաստանի համար, Իրանն ու Վրաստանը իրարու կապելով՝ Կասպից ծովէն դէպի Սեւ



ծով ճանապարհի հաստատելով թուրքերի շրջափակումն ազատագրելու համար երկիրը:

Միայն 2016ի 4օրեայ պատերազմի ցնցումն ետք ՀիւսիսՀարաւի շինութիւնը շարժիլ սկսաւ: Իսկ Թաւշեայ յեղափոխութեան ժամանակ ի յայտ եկան բոլոր խարդախութիւնները, զեղծարարութիւնները, շինարարական բացթողումները: Արցախի 44օրեայ պատերազմը նոր թափ տուաւ ՀիւսիսՀարաւի շինարարութեան: Կառավարութեան «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագիրը, որ ոչ միայն ՀիւսիսՀարաւ, այլ նաեւ Արեւելք-Արեւմուտք հաղորդակցութեան ուղիներու շինութիւնը նկատի ունի, Հայաստանի համար ռազմավարական նշանակութիւն ստացաւ:

«Խաղաղութեան խաչմերուկ»ը կը խաչաձեւէ Արեւմուտքի եւ Իրան Հնդկաստանի շահերը: Արեւմուտքը, յատկապէս ԱՄՆ հետաքրքրուած է Արեւելք-Արեւմուտք ճանապարհային ծրագրով, որ Միջին Ասիան պիտի կապէ Թուրքիոյ ու Միջերկրականին: Իսկ Իրան ու Հնդկաստան մասնաւորապէս հետաքրքրուած են Հիւսիս-Հարաւով, որ այս երկու պետութիւնները պիտի կապէ Վրաստանին՝ Հնդկական ովկեանոսը՝ Սեւ ծովուն: Այս համայնապատկերին մէջ Ռուսաստան ու Ազերպայճան մասնաւորապէս հետաքրքրուած են Արեւելք-Արեւմուտք ճանապարհով, պայմանով որ ան վերահսկէ Ռուսաստանը, այսինքն Հայաստան չունենայ տարածքային ինքնիշխանութիւն այդ «Զանգեզուրի միջանցք» անուանուած հատուածին մէջ:

Հիւսիս-Հարաւը, իբր տարանցիկ ճանապահ, կը մնայ այլընտրանքային ուղի, որովհետեւ արդէն տասնեակ տարիներէ ի վեր կը գործէ Հիւսիս-Հարաւ՝ Իրան-Ազերպայճան-Վրաստան ճանապարհը:

Հայաստանէն անցնող՝ միջազգային չափանիշերուն համապատասխանող արագընթաց մայրուղիին կառուցումը տակաւին առ նուազն հինգ-վեց տարուան կը կարօտի իր աւարտին հասնելու համար: 1520 տարի ուշացումով կառուցուող մայրուղին, նոյնիսկ իբր այլընտրանքային մայրուղի ունի իր կարեւորութիւնը, մանաւանդ Իրանի համար, որու շնորհիւ վերջինս կ'ազատի ամբողջովին Ալիեւէն կախեալ ըլլալէ:

Վերջին շրջանին անսովոր կերպով բազմացան ԱՄՆու Արտաքին գործոց նախարարութեան եւ այլ գերատեսչութիւններու բարձրաստիճան պաշտօնեաներու այցերը Երեւան: ՕՊրայըն՝ Եւրոպայի եւ Եւրասիոյ հետ յարաբերութիւններու ղեկավարը շատ յստակ կերպով մատնանշեց ինքնիշխանութեան պայմաններու մէջ Հայաստանէն անցնող Արեւելք-Արեւմուտք ճանապարհի շինութեան անհրաժեշտութիւնը ԱՄՆու համար:

ԱՄՆու, Ռուսաստանի, Իրանի եւ Ազերպայճանի շահերու բախումը կը բարձրացնէ Հայաստանի ռազմավարական կարեւորութիւնը, պայմանով որ ան կարենայ դիմադրել ռուսերու եւ թուրքերու դրդումով՝ ազերական սահմանային յարձակումներուն:

ԺԻՐԱՅՐ ԶՈՒԱՔԵԱՆ

18/7/2025 ՆՈՐ ՅԱՌԱՋ

ՀԱՅՈՒ ՇԱՀԸ ԵՒ ԻՐԱԻԸ



Հայաստանի վարչապետը յայտարարութիւններ կ'ընէ, եւ զինք լսող ողջախոհ հայր եւ հայու բարեկամը շուարումի կը մատնէ: Ան յայտարարեց, որ Հայոց Ցեղասպանութեան ճանաչումները ո՛չ մէկ շահ բերած են Հայաստանի: Չէ ըսած, որ ի՞նչ վնաս բերած են: Եթէ ըսէր, կը հասկնայինք ազգի շահ-վնասի ըմբռնումը: Հայաստանի Քաղաքական Շահը միթէ ընդհանրապէս հայ Ժողովուրդի շահի եւ վնասի ըմբռնումէն տարբէ՞ր է: Այդ ժողովուրդը ՀԱՅ

ԱճԳն է, թէ միայն ներկայի «իրական» կոչուող Հայաստանը՝ իր բնակչութեամբ: Հայաստանի ըմբռնումը եւ սահմանումը նոյնը եղած են եւ նոյնն են բոլոր անոնց համար որոնք իրենք զիրենք որպէս այդ կ'ընդունին:

Խորհի՛լ «Հայաստան»-ի ըմբռնման մասին, որպէսզի զիրար հասկնանք եւ ուրիշներ ալ մեզ հասկնան, գիտնանք եւ գիտնան, թէ ի՞նչ ենք, ի՞նչ կ'ուզենք եւ ինչո՞ւ:

Մինչեւ 1915, հակառակ անոր որ հայերը եւ իրենց բաժան բաժան եղած հայրենիքը օտար տիրապետութիւններու տակ կը գտնուէին, նոյնիսկ երբ կ'ապրէին հեռու-հեռաւոր աշխարհներու մէջ, իրենք զիրենք ՀԱՅ կը համարէին, մէկ եւ նոյն, թէւ այդ հայրենիքը քաղաքական սահմաններէ զրկուած էր, բայց անոնք գիտէին, որ կար այդ Հայրենիքը: Երբ Հայաստան կ'ըսէին, կը հասկնային նոյն աշխարհագրութիւնը, այլ երկինքներու տակ զայն կը պահէին եւ կ'իրացնէին լեզուով, մշակոյթով, գրականութեամբ, պատմութեամբ, եկեղեցիով: Կը պահէին մէկութիւն: Ինքնութիւն էր հայ քրիստոնէայ ըլլալ, եկեղեցին ազգ ըլլալու եւ պահելու հոգեմտաւոր պատուանդան էր :

Ինչո՞ւ գաղթած հայերը հեռաւոր Մատրասի մէջ հայերէն թերթ պիտի հրատարակէին, Կալկաթայի մէջ կրթական հաստատութիւն ունենային: Պարզ չէ՞, որ անոնք կը շարունակէին մնալ նոյն ազգին մէջ:

Իր հայրենիքին մէջ ապրող հայ ժողովուրդը ցեղասպանութեան ենթարկուած եւ հայրենահանուած էր: Այդ Հայրենիքը Վան էր, Մուշ, Սասուն, Նաեւ՝ Կիլիկիա: Այդ բարոյական-քաղաքական ըմբռնում էր երէկ, եւ է այսօր:

Օրէնքներով առաջնորդուող երկիրներ նուազագոյնը կ'ընեն ճանչնալով ցեղասպանութիւնը, թէւ այդ մսկոտ արտայայտութեան մէջ չեն ներառներ հայրենահանումը, որ կը շարունակէ հայասպանութիւնը:

Թուրքը կը խօսի «Թիւրք իրքինին եաշատըքը եերլըր»-ի մասին, «թուրք ցեղի ապրած վայրեր»-ու, զորս կը համարէ իր հողը, հայրենիքը: Ինչո՞ւ հայր իր հայրերու բնակած աշխարհը իր հայրենիքը պիտի չհամարէ:



Ամերիկա կամ Ֆրանսա բնակող «վանեցի» Գեղամին կամ «մշեցի» Սիմոնին հարցուցէ՛ք, թէ ո՞ր է Հայաստանը, ան պիտի ըսէ «Վան, Մուշ»:

Մարդու դէմ գործուած Ոճիրը ճանչնալ եւ դատապարտել քաղաքական բարոյական է, փուճ է, եթէ մնայ եթերին մէջ, թուղթի վրայ, արդարութեան արժէքներու վրայ ոչինչ կ'աւելցնէ, ձրի մխիթարութիւն կ'ըլլայ: Յեղասպանութեան ճանաչումները մարդկութեան եւ հայ ժողովուրդին համար էական բարոյականութեան շահ են, որ վաղ թէ ուշ պիտի յանգի արդարութեան, որպէսզի մարդիկ ճակատաբաց ըսեն, որ իրապէս դուրս եկած են Անտառի Օրէնքէն, «ջունգլի»-ի օրէնքէն: Քաղաքակիրթ աշխարհը, իր ամպագոռոգո ժողովներուն մէջ հայոց ցեղասպանութիւնը եթէ օրին ճանչնար, դատապարտէր հայերու հայրենահանումը, արդարութիւն եւ իրաւունք վերականգնէր, Հիթլեր, երբ իր զրահապատները կը խուժէին Լեհաստան, պիտի չըսէր «ո՞վ կը յիշէ հայերը», եթէ հայերու ցեղասպանութիւնը եւ հայրենահանումը պատշաճ վերաբերումի արժանացած ըլլային, հրէական ցեղասպանութիւնը տեղի չէր ունենար: Ի՞նչ երաշխիք կայ, որ մարդկութիւնը պիտի չդիմագրաւէ նոր ցեղասպանութիւններ, այս անգամ ոչ թէ նախնական միջոցներով, այլ ձեռք բերուած հիւլէական հզօրութեամբ, սպառնալով «կապոյտ մոլորակ»-ի վրայ եղած կեանք-հրաշքին:

Յեղասպանութիւն եւ հայրենահանում ՀԱՅՐ զրկեցին իր հայրենիքին մէջ ապրելու իրաւունքէ: Այս ոճիրը մոռնալ արմատներու եւ նախահայրերու ուրացում է եւ ըլլալ անանցեալ: Ճանաչումները իրաւունքի յաղթանակ են, մարդկութեան դէմ գործուած ոճիրի դատապարտութիւն եւ իրաւունքի վերականգնումի առաջին քայլ: Այդ իրաւունքը ՀՈՂ է եւ ՀԱՏՈՒՑՈՒՄ: Շահ՝ որ կրկին կը միջազգայնացնէ պատմութեան մէջ ծանօթ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՐ, որպէսզի արդարութիւն ըլլայ: Այս ՇԱՀն է հայուն, եթէ ան չէ վատսերած: Ըսել, որ ցեղասպանութեան ճանաչումները շահ չեն բերած Հայաստանի, կ'առաջնորդէ հոն, ուր Արցախը կը դառնայ շահ չբերող հարց, նոյն հունով՝ նաեւ Զանգեզուրը, մտածել՝ նաեւ «Արեւմտեան Ատրպէյճանի»-ի մասին, զայն շահ-վնասի էջին վրայ որպէս ի՞նչ պիտի արձանագրենք:

Դիւանագիտական մեծ խաղերու մէջ հանդէս եկող Հայաստանի վարչապետի վերջին գիւտը եղաւ այն յայտարարութիւնը, որ «Թայուանը կը պատկանի Չինաստանի»: Ոչ ոք իր կարծիքը կը հարցնէր, իր կարծիքը ոչ մէկ կշիռ կրնայ ունենալ ՄԵԾԵՐՈՒ խաղին մէջ: Այդ յայտարարութիւնը Ի՞նչ ՇԱՀ կրնայ ապահովել Հայաստանի: Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել, Արցախը, Վանը, Մուշը, Սասունը, Կարսը, Անին, հայոց հայրերու կառուցած կեղեցիներու վկայութեամբ, կը պատկանին հայերու, Հայաստան են:

Յեղասպանուած հայերը հայ ազգին մաս կը կազմէի՞ն, թէ ոչ, անոնց բնակած երկիրը հայոց իրական հայրենիք է՞ր թէ ոչ: Եթէ երէկ հայրենիք եղած տարածքէն կարելի է հրաժարիլ եւ զայն մոռնալ, պատճառ չկայ, որ այսօր իրական հայրենիք համարուող տարածքն ալ կարելի է մոռնալ:

Ի՞նչ շահելու համար:



Աւելի քան երբեք, հայ ժողովուրդը կանգնած է իր իրաւ մէկութեան նուաճման հարցին առջեւ, որ յիշողութիւն – ինքնութիւն է եւ ազգային տարածքի իրաւունք, որուն պաշտպանութիւնը եւ տիրութիւնը ազգի գոյապահպանման երաշխիք են:

Յեղասպանութեան ճանաչումը կրպակի շահ-վնասի մանրադրամ չէ, ան հաշուետուութեան մեկնակէտ է հայ ժողովուրդի իրաւ շահերու տիրացման համար: Ճամբացոյց է, որպէսզի հայերը ընթանան ներքին միացման, հայրենիքի ամբողջացման եւ տիրութեան տանող ուղիով:

Ազգ կ'ըլլանք միացումով եւ «նախնիներու ապրած աշխարհներ»-ու միացումով:

Յեղասպանութեան եւ անոր ընկերացած հայրենահանման մարդկութեան դէմ ոճիրի ճանաչումը մարդու եւ ժողովուրդներու բարոյական եւ քաղաքական յանձնառութիւն է, հայ ազգի հանդէպ քաղաքական պարտք՝ Հայաստան Հարապետութեան մէջ եւ իր բռնագրաւուած հայրենիքէն դուրս պարտադրաբար գաղթական ժողովուրդին համար, զոր կը կոչենք ՍՓԻԻՌՔ:

Ի՞նչ պէտք է ընէ Սփիւռքը իր բռնագրաւուած հայրենիքին համար: Ինչպէ՞ս պիտի հետապնդէ իրաւատէրի գոյութենական ազգային քաղաքականութիւն: Այդ ինչպէ՞ս օրակարգ պիտի ըլլայ, ցեղասպանութեան ճանաչումներու ենթահողին վրայ, որոնցմով միջազգային համայնքը ստանձնած է իր քաղաքական պարտքը:

Այդ պարտքը յարգել տալ պահանջ է եւ հայութիւնը այդ ինք պիտի հետապնդէ: «Ճանաչում»-ները հայութեան ներկայի եւ վաղուան շահը կ'ըլլան, եթէ, ներսը եւ դուրսը, անոնց իրացումը հետապնդող մէկ եւ նոյն ժողովուրդ ըլլանք: Անարժաններ կրնան ըսել, որ ազգի իրաւունքը իրենց շահը չէ, շահ չի բերեր:

Առանց ամբողջական իրաւունքի ըմբռնումի, մասնակիին ժամանակաւոր է եւ մոռցուելու դատապարտուած :

Հարցում. Բազմամիլիոն Սփիւռքը ինչպէ՞ս վերականգնել որպէս ամբողջի տեսիլք ունեցող յանձնառու իրաւ հայրենատէր ազգ, որ գիտնայ մերժել յաւերժ գաղթական ըլլալու ստորացումը, հրաժարի մանր գոհացումներու ճապկումներէ, ինչպէս որ է լաւ ապրելու իրաւունքի հետապնդումը:

Գերմանացի իմաստասէր Կարլ Եասփերզ ըսած է, որ հարցումները աւելի կարեւոր են քան անոնց պատասխանները: Ո՞վ, որո՞նք եւ ինչպէ՞ս պիտի պատասխանեն եւ գործեն, որպէսզի պարտութիւնը չըլլայ յաւերժական:

Յեղասպանուածներու եւ հայրենահանուածներու անորոշ միլիոններով ժառանգները, որպէս զոհ եւ իրաւատէր-պահանջատէր կ'ըլլան կազմակերպուելով եւ քաղաքական հրապարակ գալով, գերազանցելով ներագգային եւ ներհամայնքային ամուլ-ամլացնող հատուածական մանրութ մրցակցութիւնները, որպէսզի վերականգնեն անարդարութեան նկուղներուն մէջ մնացած հայ ազգը, որ պատմութեան չբացուող էջերուն մէջ է, եւ կը կոչուէր ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՒԹԻՒՆ, որուն հայրենիքը ԱՐԵՒՄՏԱՀԱՅԱՍՏԱՆՆ էր: Այս



ազնուական պայքարը էապէս ազգային եւ հեռանկարային է, պարտուածի հոգեբանութեան մէջ թաղուած չմնալու կոչ եւ չըսելու՝ որ ուշ է:

Ֆրանսան պարտուած եւ գրաւուած էր: Նախախնամական անձ մը Մանշ ծովի միւս ափը գնաց եւ պայքարի կոչ ըրաւ ժողովուրդին, որ լսեց, միացաւ եւ պայքարեցաւ: Պատմութիւնը իրեն իրաւունք տուաւ:

Ի՞նչ կը բանին ցեղասպանուածներու եւ հայրենահանուածներու միլիոնաւոր յետնորդները: Ինչո՞ւ անոնք պայքարող ժողովուրդ պիտի չըլլան: Եթէ չըլլան, հայրենագուրկ ըլլալէ ետք, կը դառնան անինքնութիւն համբանք: Աշխարհատարած յետնորդներու պարտքն է կազմակերպուիլ եւ կեանքի կոչել Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան ներկայացուցչութիւն, որ թաղային մասնակիէն եւ սովորական եսերէն անդին նայի, եւ ըլլայ առաջնորդ: Այդպէս ըրած են ԻՐԱԻ ՄԵԾԵՐը, երբ հաւատքով ոտքի կանգնած են, միացուցած եւ առաջնորդած են ժողովուրդը: Պիտի ընե՞ն, պիտի ընե՞նք այնպէս, որ Արեւմտահայութեան Արեւմտահայաստան հայրենիքը հայուն վերադառնայ:

Յայտարարել, Արեւմտահայաստանի եւ Արեւմտահայութեան պահանջատէր ներկայացուցչութեան կազմութիւնը, ընել այնպէս, որ Յեղասպանութիւնը ճանչցած պետութիւններ եւ կազմակերպութիւններ գայն ճանչնան, որպէս ցեղասպանուած եւ հայրենահանուած ժողովուրդի յետնորդներու իրաւասու ներկայացուցչութիւն եւ խօսակից, որպէսզի ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅՈՒ չմնայ արխիւներու մէջ, չըլլայ սոսկ ոգեկոչման ջոջական կամ հոգեհանգստեան հանդէս, ըլլայ ՀԵՏԱՊՆԴՈՒՈՂ ՕՐԱԿԱՐԳ ԵՒ ԴԱՏ: Յետնորդները, որպէս մարդ եւ հայ, բարոյական եւ քաղաքական պարտք ունին իրենց կորսնցուցած Հայրենիքին եւ իրենց նախնիներուն հանդէպ, որպէսզի ապրին իրենց ինքնութեամբ, չըլլան, ինչպէս արդէն դարձ մը ի վեր, պատմութեան չարիքներու հեղեղին մէջ քշուող աննշան տաշեղ:

Մի՛շտ խորհիլ, որ վաղը ուշ է, եւ լսել ֆրանսացի մեծ գրող Անթուան տը Սենթ'Էկզիպերիի իմաստութիւնը, կանգնիլ եւ առնել առաջին քայլը, ապա երկրորդ առաջինը, եւ շարունակել... հասնելու համար: Այդպէս է նպատակի հետապնդման ուղին, միշտ գիտակցելով, որ Արեւմտահայաստանը հայու հայրենիք է: Յեղասպանուածներու եւ հայրենահանուածներու յետնորդները իրենք են Արեւմտահայաստան հայրենիքին տէրը: Եթէ չըլլան, կը մնան եւ կ'ըլլան անհետանալու դատապարտուած յաւերժի գաղթականներ:

Բանաստեղծները յայտնատեսներ են: Կը յիշեմ Յովհաննէս Շիրազի խօսքը այն աշխարհի մասին, զոր շատեր, ազնուական յամառութեամբ կը կոչեն ԷՐԳԻՐ: Շիրազ, այդ աշխարհին համար ըսած էր, որ ինք հոն միտքով ման կու գար, նոր սերունդները հոն ման պիտի գային ոտքով: Մեծ առաջնորդները, այդ հաւատքով կը կերտեն պատմութիւն եւ ապագայ, չեն կքիր կրպակի շահ-վնասի մտմտութի դիմաց: Շիրազ մէկ օդանաւէ միւսը չէր ցատքեր, շփիկնկ չէր ընէր, հայ էր եւ տեսիլք ունէր:

Ի՞նչ ընել եւ ինչպէ՞ս, որպէսզի Արեւմտահայութեան եւ անոր հայրենիք Արեւմտահայաստանի ԴԱՏը վերադառնայ միջազգային քաղաքական բեմ եւ ըլլայ զօրաշարժ, չըլլայ սոսկ թղթաբանութիւն, բեմի եւ եթերի աղմուկ: Այդ ընելու համար, կը

յաղթահարե՞նք անբովանդակ փառասիրութիւնները եւ կոշկոռ կապած քէները, հրաժարելով, ինչպէս կ'ըսուի գրաբարով, «բարձրնտիր լինելու ախտ», որ ընկճուածի հոգեխոց եւ վարակ է:

Միթէ՞մեր մէջ մեռա՞ծ են Դաւիթը, Վահագնը, Հայկը, իր հողէն ուժ ստացող Արշակունի թագաւորը:

Հրաշքը պիտի գործէ հայը, կամ ան պիտի ընդունի ազգ չըլլալ եւ անհետանալ, դառնալ մոլորակի բազմանուն հասցէներով նորանուն-անանուն արտադրող – սպառող քաղաքացի, սպառողական ընկերութեան հիւլէ:

Յակոբ Պալեան

Հայրենիք

16 Սեպտեմբեր 2025

ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ. ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԷՆ ԴԷՊԻ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Լեզուապահպանումի նիւթը՝ մանաւանդ արեւմտահայերէնի վտանգուած ըլլալը, ինչպէս ներկայացուեցաւ ամփոփ ձեւով անցեալ երկու յօդուածներուն մէջ, լուրջ, մտահոգիչ եւ պատասխանատու հարց է: Այլասերելու եւ մէկ մշակոյթի ծառայելու մարտահրաւերները անողորմ են եւ ճնշիչ, մանաւանդ փոքր գաղութներու համար, որոնց յաջորդական

սերունդները կը ծնին եւ կը մեծնան օտար ափերու մէջ:

Կեդրոնանանք մեր գաղութներուն վրայ եւ մեր մայրենիին վրայ:

Ի՞նչ են արեւմտահայերէնի դիմագրաւած խնդիրները:

Վստահ դուք ալ ունիք ձեր պատճառներու ցանկը՝ մեկնելով ձեր փորձառութիւններէն: Ըստ մեր հետազօտութիւններուն, ակադեմական հարցազրոյցներուն, հարցախոյզներուն եւ նկատառումներուն, արեւմտահայերէնի դիմագրաւած խնդիրներն են՝

- անիմացութիւն՝ արեւմտահայերէնի վտանգուած լեզու ըլլալու մասին
- անտարբերութիւն
- երկլեզուութեան մասին սխալ ըմբռնումներ
- մշակութային ձուլում



- նշանափոխութեան (code-switching) հանդէպ ժխտական դիրք
- նսեմութեան զգացումներ
- տնտեսական ճնշումներ:

Արեւմտահայերէնի դիմագրաւած մեծագոյն խնդիրը՝ ժխտական կեցուածք

Եթէ անպայման պիտի մասնաւորենք կամ ընդգծենք մեծագոյն խնդիրը, որուն պատճառով այսօր արեւմտահայերէնը «Անպայման վտանգուած» կը դասակարգուի, այդ ալ ժխտական կեցուածքն է՝ ընդհանրապէս ծնողներու, հանդէպ հայկական դպրոցին, հայկական եկեղեցիին, հայկական կուսակցութեան, Հայաստանի եւ Յեղասպանութեան:

Անկախ այն իրականութենէն, թէ հայերու ժխտական կեցուածքները մեծապէս նպաստած են իրենց մայրենիին ներկայ վիճակին, այս ժխտական դիրքերու հետեւանքները բազմազան են եւ ակներեւ.

- աւանդական արժէքներէ հեռացում
- աւանդական լեզուի չգոյութիւն
- ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ երիտասարդներու մասնակցութեան տկարացում
- ինքնութեան տազնապ
- մեծ ծնողներու հետ հաղորդակցութեան խզում
- նսեմութեան զգացումներ
- պատկանելիութեան զգացումներու կորուստ
- տան մէջ մայրենի լեզուի գործածութեան պակաս:

Կարելի կը մտածէք, թէ արդեօք ետդարձի ճամբայ կա՞յ: Անպայման կայ:

Ընկերալեզուաբաններու օրակարգը

Ճիշդ է, թէ ընկերալեզուաբաններու յաջողութիւններուն շարքը երկար է, որովհետեւ մենք միշտ լաւատես ենք, ԲԱՅՅ... Որպէս ընկերալեզուաբաններ, կրնանք լեզուապահպանումի եւ վերակենդանացումի առաջարկներ եւ ճամբու քարտէզ ներկայացնել, բայց իրականութիւնը այն է, թէ միայն ընկերութիւնը ի՞նք կրնայ փրկել իր լեզուն:

Այսօր տակաւին կան հայեր, որոնք տեղեակ չեն թէ իրենց մայրենի լեզուն վտանգուած է, թէ ինչ արագութեամբ երկլեզու ընկերութիւն մը կրնայ միալեզու դառնալ, եւ թէ լեզուի փոփոխութիւնը (language shift) սաստիկ արագ է: Անոնք կը նային իրենց շուրջը եւ կը տեսնեն թէ տակաւին կան շատեր, որոնք կը խօսին հայերէն եւ կը հետեւցնեն թէ լեզուն լաւ



վիճակի մէջ է: Անոնք կը մերժեն տեսնել կամ ընդունիլ, թէ իրենց մայրենի լեզուն կը տկարանայ եւ վտանգուած է:

Կան նաեւ անոնք որոնք կը հաւատան, թէ իրենց լեզուն յատուկ պաշտպանութիւն կը վայելէ, ինչպէս, հակառակ այն իրականութեան թէ Փանամայի Թերիպի ընկերութեան լեզուն՝ Նասօ, խիստ վտանգուած է, անոնց թագաւորը այսպէս արտայայտուած է. «Մենք վտանգուած չենք, որովհետեւ Աստուած ստեղծեց մեզ: Ան մեզ չստեղծեց որ ուրիշներ մեզ ոջնջացնեն: Եթէ անցեալ 500 տարիներու դժուարին պայմաններուն տոկացինք, ուրեմն ինչո՞ւ հիմա պիտի անհետանանք»:

Ընկերալեզուաբաններու նպատակը հաղորդակցութեան միջոց մը ապահովել չէ, այլ օգնել ընկերութեան, որ իր ժառանգութեան յատուկ ըլլալը տեսնէ եւ գնահատէ: Եւ ա՛յս մէկը դիրքին գործ մը չէ: Բաւական ճիգ կը պահանջէ ընդգծել լեզուական ժառանգութեան մը կարեւորութիւնը:

Ի՞նչ պիտի ընել: Շատ պարզ է՝ երկլեզու ըլլալ:

Արեւմտահայերէնի պահպանման գաղտնիքը՝ երկլեզուութիւն

Արդէն մարդկային ուղեղը բնական կարողութիւն ունի քանի մը լեզու սորվելու նոյն ատեն: Աշխարհ մը ուր ամէն անձ կը խօսի երկու լեզու՝ մայրենի լեզուն եւ մեծամասնութեան լեզուն, բացարձակապէս կարելի է եւ փափաքելի՝ առանց որեւէ խաչաձեւումի կամ պայքարի, որովհետեւ անոնք ունին տարբեր նպատակներ՝ մէկը ինքնութեան եւ միւսը հասկցուելու համար:

Լեզուաբաններ քաջատեղեակ են, թէ լեզուներու անհետացումի երեք փուլերէն երկրորդին՝ երկլեզուութեան շրջանին, կարելի է ազատել մայրենի լեզու մը մեռնելէ:

Ինչո՞ւ երկլեզուութիւնը:

Այսպէս, ըստ գիտական սերտողութիւններու, երկլեզու խօսողներ

- աւելի գործնական են եւ լայնախոհ
- աւելի դիրքին ընկերութիւն կը կերտեն
- աւելի խելացի, հաղորդական եւ իմացողական են
- իրենց լեզուները «կը խառնեն», որովհետեւ աւելի իմաստուն են
- կը գերազանցեն մէկ լեզու խօսողները



- կը յաջողին դպրոցին մէջ, որովհետեւ տան մէջ մայրենի լեզուն կը գործածեն
- հարցերը աւելի արագ կը լուծեն՝ ըլլան անոնք կեանքի, գործի կամ թուաբանական հարցեր
- չափով աւելի մեծ ուղեղ կ'ունենան:

Արեւմտահայերէնի կենսունականացումի գործնական քայլեր

Եթէ այս փաստերը համոզիչ եղան, անցնինք արեւմտահայերէնը սերունդէ-սերունդ փոխանցելու գործնական քայլերուն, ուր անհատը, ընտանիքը եւ ընկերութիւնը շատ ընելիք ունին: Այսպէս.

Կենսունականացումի քայլեր՝ անհատական մակարդակի վրայ

- Այցելել Հայաստան՝ առանձին, հայ կամ օտար բարեկամներու հետ
- Անդամագրուիլ հայկական մշակութային միութեան մը կամ կուսակցութեան մը
- Առիթներ ստեղծել հայերէն խօսելու
- Խուսափիլ քննադատելէ հայ մշակոյթը կամ հայկականութիւնը
- Կարելի եղածին չափ տան մէջ հայերէն խօսիլ (նշանափոխութիւնը բնական է)
- Հայերէն երգեր մտիկ ընել
- Հպարտ ըլլալ հայ ըլլալով
- Յաճախել մշակութային, ընկերային, եւ եկեղեցական ձեռնարկներ
- Չքննադատել անոնք, որոնք «սխալ» կամ «կտրուկ» կամ «խառն» հայերէն կը խօսին:

Կենսունականացումի քայլեր՝ ընտանեկան մակարդակի վրայ

- Եկեղեցի յաճախել՝ կանոնաւորապէս
- Զուակներ հայկական դպրոց դրկել (եթէ կարելի է անշուշտ)
- Հայ բարեկամներու շրջանակը ընդլայնել, որպէսզի փոքրիկներ աւելի առիթներ ունենան հայերէն խօսելու
- Հայերէն երգեր մտիկ ընել, մանաւանդ ընտանեկան հաւաքոյթներու ժամանակ
- Չքննադատել զուակները, երբ անոնք «սխալ» կամ «կտրուկ» կամ «խառն» հայերէն խօսին
- Տօնախմբել բոլոր ազգային եւ կրօնական տօները
- Քաջալերել մեծ ծնողները, որ հայերէն խօսին թոռնիկներու հետ
- Օրինակ ըլլալ ուրիշ ընտանիքներու՝ քաջալերելով հայերէն խօսիլը տան մէջ:



Կենսունակնացումի քայլեր՝ հաւաքականութեան մակարդակի վրայ

- Արեւմտահայերէնի վտանգուած կարգավիճակին մասին տեղեակ պահել գաղութները
- Դրական կեցուածք որդեգրել Հայաստանի հանդէպ
- Երիտասարդներուն մէջ հպարտութիւն ներմուծող մշակութային ելոյթներ կազմակերպել
- Ընդունիլ որ սփիւռքը մնայուն կարգավիճակ մըն է
- Ծնողներ տեղեակ պահել հայերէն սորվելու համացանցային կայքէջներու հասցէները
- Կազմակերպել շրջապատոյտներ դէպի Հայաստան
- Հայերէնի դասաւանդութիւնը եւ դպրոցները արդիականացնել
- Հայկական մշակոյթը ծանօթացնել տեղական մշակոյթին
- Միջկուսակցական եւ միջեկեղեցական համագործակցութիւն քաջալերել
- Մշակել ծրագրեր որ ծնողներ հայերէն խօսիլ սորվին
- Քաջալերել ծնողներ, որ հայերէն խօսին իրենց զաւակներուն հետ:

Եզրակացութիւն

Այս առաջարկները՝ պարզ եւ շատերու կողմէ փորձուած, եւ ընկերալեզուաբաններու կողմէ վաւերացուած, մեծապէս պիտի նպաստեն արեւմտահայերէնի վերաշխուժացման եւ անոր գոյատեւման 21-րդ դարէն անդին:

Յուսամ բոլորս համոզուեցանք, թէ անպայման ելք մը կայ, եւ ինչպէս աշխարհի միւս լեզուները, մեր մայրենի լեզուն՝ արեւմտահայերէնը, իրաւունք ունի գոյատեւելու՝ փոխանցելով զայն ներկայ եւ յաջորդ սերունդներուն:

ԱՐՏԱ ՃԷՊԷՃԵԱՆ

17 Յուլիս 2025

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈԻՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԺԱՄԱՆԱԿԸ

Ժամանակը շատ բան տարաւ
Իմ հուրքերէս արեւովա՛ն,
Պաղ ալիքներ խառնեց կրակիս,
Բոցավառո՛ղ տենչերուս հին...

Ո՞ւր է հիմա տասնութամեայ
Պարմանուհին այն հըրածին,
Վարսերով բորբ եւ հուրհրան,
Կենսաժպի՛տ ու կենսախի՛նդ...

Ո՞ւր են աչքերն իր հրավա՛ն,
Ուր կարծես թէ արեգակներ
Կը շողային արեւափայլ
Ներքին լոյսով ճաճանչագե՛ղ...

Անցաւ-գնաց պարմանուհին,
Մնացին լոկ հետքեր լուսէ
Զոր ժամանակն դեռ չջնջեց
Հարուածովն իր անգութ ու քիրտ...

Եւ չեմ գիտեր՝ իմաստնացա՞յ,



Թե՛ խաբկանք է ցնորածին,
Իմաստուն չե՛ն դառնար բնաւ,
Լոկ կը շալկեն բե՛ռն անցեալի...

Երեխա՛ն է կամ պարմա՛նը,
Որ հայեացքով թարմ ու վճիտ
Աւելի՛ն է քան աւագը
Թո՞ղչքով վսե՛մ, արեւածի՛ն:
7/6/2018

.....

ԻՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Իմ պատմութիւնը խենթ մանկան ճիչ է,
Լոյսով արբեցած թիթեռի կեանք է,
Ծաղիկէ ծաղիկ ոստոստուն ցատկ է,
Հիւթեղ նեկտարով գինովութիւն է:

Յաւին մէջ անգամ ժպիտի ցոլք է,
Տառապանքին մէջ՝ մրմունջ աղօթքի,
Յոյսին կառչելու յամառութիւն է,
Վատը լաւ տեսնող հայեացք է բարի:

Իմ պատմութիւնը չունի ժամանակ,
Աշնան մէջ դալուկ ոսկեհոր բոց է,
Թէ գայ ձմեռը խարոյկի գոլ է,
Ոսկեշող լոյսի հրավառութիւն է:

Իմ պատմութիւնը չմեռնող յոյս է,
Հաւատք ու սէր է որ աւարտ չունի,
Թէ հորիզոնիս արեւն մայր մտնէ,
Դեռ պիտ' յամենայ լոյսս ծիրանի:
8/8/2024

.....

ՊԱՏԿԵՐԴ

Քարաստանիդ մէջ քնքուշ հոգի է,
Ապառաժներուդ՝ մամուռի լաց է,
Լենաշխարհիդ մէջ ոգեղէն սլացք է
Եւ Նարեկաբոյր լուսեղէն վանք է:

Մի բուռ հողիդ մէջ սիրտ մը կը տրոփէ
Եւ մաքուր խիղճ մը կը ցոլայ բիրեղ,
Կարծես չարութիւն չես տեսեր երբեք
Եւ այդպէս բարի, ազնիւ մնացեր:

Քու տառապանքեղ ես լոյսեր քամեր,



Շիր-շիր արցունքէդ ինքնամաքրուեր
Ու կանգներ ես վեհ Արարատիդ պէս,
Աչքերուդ դիմաց լուսէ երազներ:

Այս պատկերդ է որ հետս եմ տարեր,
Հոգիս շաղախեր, սիրտս սնուցեր,
Անյազ կարօտով քեզ եմ որոներ
Լայն աշխարհի պիղծ ճամբաներուն մէջ:
16/8/2024

.....

ՏԱՂԻՍ

Երազ թելերով ինձ այցի եկար,
Ցաւի թելերով թե՛ լ-թե՛ լ հիւսուեցար,
Դարձար ամոքիչ դեղ ու բալասան,
Դեռ՝ բերկրանք անգին, հոգւոյս՝ մանանա:

Քու սուրբ տառերդ Մեսրոպաստեղծ են,
Բառերդ լուսէ մեր Մեծասքանչն են,
Հատիկ առ հատիկ ես կը հաւաքեմ,
Զանոնք կ'ընծայեմ ցորեն հացի պէս:

Այնտեղ վերքերս կը դառնան երգեր,
Այնտեղ երազս կը խոյանայ վեր,
Կը պարուրէ քեզ, քու լեռներդ վեհ
Որպէս արեւի ճաճանչ-համբոյրներ:

Այնտեղ իմ հոգիս կը շատնայ անչափ
Որ բիր դարերդ կը դառնան ներկայ,
Ժամանակէն վեր ու անկէ անդին,
Ան սրտիս խօսքն է շաղախուած Սրտիդ:
14/7/2025

.....

ՈԳԻՆ Է

Ու բարդ ի բարդ սխալներս ինձ ցոյց տուին ճշմարիտը,
Ինկայ, ելայ ես վիրաւոր որ գտնեմ իմ ճանապարհը:

Չարը մթին ինձ սորվեցուց բարւոյն լոյսին բուն արժէքը
Ու կառչեցայ լոյսին անոր, հոն յառեցի իմ հայեացքը:

Դիմակներուն մէջ բիրաւոր կրցայ գտնել իրաւ դէմքը,
Սիրեցի զայն ամբողջ սրտով, չկար այնտեղ սուտն ու կեղծը:

Անկատար տենդ ու տենչերս ինձի տուին երազ թելեր
Ու անոնցմով ես ճախրեցի դէպի անհուն հորիզոններ:



Ու կարօտովն երջանկութեան յօրինեցի իմ բերկրանքը,
Որ շող առ շող եւ ամպ առ ամպ լուսաւորեց իմ երկինքը:

Ու ըմպեցի լոյսը անոր անյագօրէն, սիրատոյչոր,
Ճաշակ մ'առի այն ճաճանչէն արեւափառ, լուսագորով...

Ու հասկցայ որ ՈԳԻՆ է որ կը ստեղծէ տիեզերքը,
Լոյսը անոր, գեղեցիկը, խորախորհուրդ կենաց փառքը:
17/8/2024

.....

ԿԵԱՆՔԻ ԱՌԵՂԾՈՒԱԾ

Ակնթարթիդ մէջ խաբուսիկ համակ կեանք մ'է խտացած,
Կու գայ, կ'անցնի ու կը սահի արագ-արագ ու աննկատ,
Ընթացքին մէջ կը տրորէ ճակատագրեր, նոր կեանք կու տայ,
Ո՞վ իմանայ, թե՛ ու թո՛ի չք, թե՛ ահաւոր անկում կու տայ...

Մերթ խոյանք տայ արծուերոյիչ, մերթ՝ սայթաքում անդունդն ի վար,
Մերթ՝ բերկրանք տայ ոսկեշառայլ, մերթ ալ՝ թախիծ խաւարամած,
Մերթ կը վառէ յոյսի ջահեր, մերթ կը մարէ նշոյլն անգամ,
Մերթ խինդ կու տայ սրտիդ, հոգւոյդ, մերթ արտասուք, արցունք ու լաց...

Ի՞նչ իմանաս կեանքի խաղը, վե՛ր ու վա՛ր է ան շարունակ,
Ու թէ չըլլար փոփոխական, ճահճանման կեանք մը կ'ըլլար,
Մէ՛րըն անգամ կը լճանար եւ անհամ բան մը կը դառնար,
Թէ որ չըլլար վախն ու ահը կորսնցնելու զայն պահ առ պահ:
7/8/2025

ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԻ ԲԵՐՔԱՌԱՏ ԿԱՂՆԻՆ ՏԱՊԱԼԵՑԱԻ

ՄԱՀ՝ ՄԱՐՄԱՐԱ ՕՐԱԹԵՐԹԻ ԽՄԲԱԳՐԱՊԵՏ՝

Ռ. ՀԱՏՏԷՃԵԱՆԻ

Գրեց՝ ՄԱՔՐՈՒՀԻ Պ.ՅԱԿՈԲԵԱՆ

Այսօր համատարած սուգի օր է Հատտեճեան ընտանիքի անդամներու, Իսթանպուլահայ մեր ժողովուրդի, Մարմարայի ընթերցողներու, նաեւ մեզի՝ Ռ. Հատտեճեանի անմիջական մտերմութեան եւ աշխատակցութեան մէջ ապրած անձերուս համար:

Սուգի օր է նաեւ աշխարհի չորս ծագերուն մէջ այն հայերուն համար, որոնք կը սիրեն, կը ծաղկեցնեն եւ կ'ապրեցնեն հայ գիրն ու գրականութիւնը եւ անվթար կը պահեն մեր մշակոյթը, որպէս ազգային սուրբ ժառանգութիւն:



Այսօր սուգի օր է, որովհետեւ կորսնցուցինք արժանաւոր հայ մը, Ռ. Հատտէճեանը, որ իր ամբողջ կեանքը անսակարկ նուիրումով եւ անփոխարինելի ծառայութեամբ գոհաբերեց Հայ գիրի ու դպրութեան զարգացման ու բարգաւաճման գործին:

Այսօր կորսնցուցինք այլեւս մեր դարաշրջանի հայ մշակոյթի ամենէն պատկառելի ու կարկառուն դէմքը, հայ գիրի ու դպրութեան աննահանջ ու բերքառատ մշակը, բեղմնաւոր ու արգաւանդ գրիչը, եռանդուն ու անաշտ գործիչը, հայ ապրումներու ամենէն վճիտ ու պաղպաջուն աղբիւրը:

Կորսնցուցինք մեր ժողովուրդի արժէքներուն եւ ձգտումներուն յանձնառու իսկական առաքեալը, ամենէն երախտարժան ու գտարիւն հայ մտաւորականն ու մեծ հայրենասէրը:

Ան եղաւ մտաւորական մը, որ ջերմօրէն սիրեց իր ազգային պատկանելիութիւնը: Հպարտացաւ հայ ծնած ըլլալուն համար: Ամէն առտու եւ իրիկուն, անշեղ հաւատքով ապրեցաւ Մաշտոցեան տառերու հմայքին հետ եւ բեղմնաւոր գրիչ ի ձեռին, անյագուրդ ծարաւով ոռոգեց հայրենի անդաստանները:

Ուզեց ստեղծել այնպիսի գրականութիւն մը, որ սիրուէր ինքզինք հայ կոչող ամէն մարդու կողմէ: Ջանաց աշխարհի վրայ ապրող մարդոց հասցնել հայոց ապրումներէն խապրիկներ եւ բոլորին ծանօթացնել ու սիրցնել հայ մշակոյթի բազմազան երեսակները:

Գրեց լեռնակուտակ գիրքեր: Ընդլայնեց եւ զարգացուց ընթերցողին մտածողութեան եւ դատողութեան տեսադաշտերը եւ բարձրացուց բոլորին գեղեցիկի եւ բարձր գաղափարականի ճաշակը:

Տիրաբար քաջատեղեակ էր օտար լեզուներու, ուստի կրնար իր գրութիւնները օտար ազգերու ալ ծանօթացնել հպարտութեամբ: Սակայն ան նախընտրեց հայ տառերու շրջանակին մէջ գտնել իր հոգեգրաւ երջանկութիւնն ու սուրբ առաքելութիւնը: Սկզբունքի հարց էր ատիկա, որուն ան հաւատարիմ մնաց մինչեւ իր կեանքի վախճանը: Որովհետեւ, իր հաստատ համոզումն այն էր որ, որպէս հայ խմբագրապետ, իր մէջ ամենէն ակնբախ եւ ուժեղ գիծը ազգային տոհմիկ գոյատեւումը պէտք է ըլլայ:

Օրաթերթ"ի երդիքին տակ 42 երկար տարիներու մեր համերաշխ ու երջանիկ համագործակցութեան ծիրէն ներս, ես անբաւ հիացումով ու հպարտութեամբ կը վկայեմ թէ, ան մեր մայրենիին եւ ազգային մշակոյթին զուգահեռ, հաւատարմօրէն սիրեց մեր եկեղեցին, սիրեց մարդ արարածը, ինչ ազգութեան ալ պատկանէր ան: Սիրեց կեանքը, Մայր բնութիւնը: Սիրեց սէրը, բարեկամութիւնը, գեղեցիկ խօսքն ու շունչը:

Իր առանձնայատուկ եզակի առաւելութիւններէն մէկն ալ այն էր որ, ան որպէս իսկական մտաւորական մը, աննախանձ սիրով եւ խանդավառութեամբ շրջապատեց իր բոլոր գրչեղբայրները: Խնդակից եղաւ անոնց յաջողութիւններուն: "Մարմարա" ի էջերը լայնօրէն տրամադրեց անոնց: "Յուշատետր"ի իր սեփական սուղ սիւնակներուն մէջ երջանիկ ապրումներով յաճախ գովքը հիւսեց իր գրչեղբայրներու գրական արտադրութիւններուն: Քաղաքիս եւ արտասահմանի մէջ, բեմերու վրայ, բազմութիւններու դիմաց, ինքնամոռաց նուիրումով բանախօսութիւններ սարքեց, փառաւորելով իր գրչեղբայրներու գրականութիւնը եւ խրախուսելով զանոնք:



Իր այս բազում գոհաբերութիւններուն փոխարէն, ան երբեմն խոցեր ալ ընդունեց, սրտաբեկութիւններ ալ ունեցաւ, սակայն իր համոզումներու եւ սկզբունքներու ուղիէն երբեք չշեղեցաւ: Մաքառումներու չղիմեց: Ասպետական ոգիով, վէս ճակատով ու անշեղ հաւատքով շարունակեց իր երթը, յանուն մարդասիրութեան եւ խաղաղութեան:

Միւս կողմէ, ան աջակից եղաւ նաեւ բոլոր գրողներուն, երաժիշտներուն, նկարիչներուն, դերասաններուն, հայ ապրումներով թրծուած բոլոր արուեստագէտներուն: Սիրեց երիտասարդները եւ ամէն ճիգ գործադրեց զանոնք հայ մթնոլորտի մէջ գրական շնորհներով օծուելու համար: Մեծ ու պզտիկ, բոլորին յաջողութիւնները ի՛րը նկատեց եւ մանուկի մը պէս ուրախացաւ ու երջանկացաւ լայնօրէն արձագանգ հանդիսանալով ուրիշի յաջողութիւններուն:

Ունէր գերզգայնութեամբ տոգորուն, փխրուն սիրտ մը, որ գրաւական կը հանդիսանար իր ազնիւ նկարագրին:

Բարի էր եւ անյիշաչար: Հաղորդական էր ու վստահելի: Անկաշառ էր եւ խղճամիտ: Համեստ էր եւ հաւասարակշռուած: Ողջամիտ էր եւ հեռատես:

Վերջապէս մէկն էր որ օժտուած էր մարդկային ամենավսեմ արժանիքներով:

*

Շատ սիրելի Պրն. Ռոպէր,

Դուք համայն հայաշխարհի մէջ սիրուած ու յարգուած անձ մը որպէս , իր ազգային սուրբ պարտականութիւնը լիովին կատարած մարդու հաստատ համոզումով, կ'երթաք ահաւասիկ հանդերձեալ այն աշխարհը, ուր գացին ու պիտի երթան հոռին ոտք դրած բոլոր արարածները անխտիր:

Վստահ եղէք որ հոն մուտքին, առաջին հերթին , ձեզ բերկրանքով պիտի դիմաւորեն հայ գրերու գիւտարարներ՝ Ս. Մեսրոպն ու Սահակը, որոնք շնորհակալութիւն պիտի յայտնեն ձեզի, իրենց աւանդը ի կատար ածելու գծով՝ ձեր վատնած երախտաշատ աշխատանքին համար:

Հոն պիտի գտնէք Հայ եկեղեցւոյ նուիրեալները, հայոց պայքարի հերոսները, մեր նահատակ սուրբերը, որոնց ճամբէն քալեցիք աներկիւղ, եռանդագին սիրով եւ հաւատարմօրէն:

Հոն բոլորն ալ ովսանաներով պիտի դիմաւորեն ու պիտի ողջունեն ձեզ եւ խունկ ու աղօթք պիտի մատուցանեն ձեզի:

Խաղաղ ննջեցէք երկինքի օթեւաններու մէջ:

Հողը թեթեւ թող ըլլայ ձեր վրայ:

Խորին ցաւակցութիւններ ձեր արժանաւոր որդիներուն՝ Արիին, Այգին եւ իրենց ընտանիքներուն, նաեւ այլ պարագաներուն:

Յաւակցութիւններ նաեւ հայաշխարհի ձեր բազմահարիր համակիրներուն:

6/9/2025

ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵՐԷՆ



կ'արտասանուի: Ահա թէ ինչո՞ւ

Գիտենք, որ լեզու մը ողջ է, եւ կը մնայ, եթէ զայն խօսողներ ըլլան, կամ՝ կան: Սակայն կրկնութեան գնով օրինակ վերցնելով, կրնանք հաստատել, թէ լատիներէն գիտցողներ շատ կան, սակայն լատիներէնը մեռած լեզու է: Խօսող չունի: Իսկ ասոր հակառակը, հրեաները վերստեղծեցին իրենց մեռեալ լեզուն, այն լեզուն՝ որ նոյնիսկ չէին գիտեր թէ ինչպէ՞ս լեզու մը գիտնալը բաւարար չէ...:



Անոր համար միշտ կը շեշտենք, թէ լեզու մը որ չի գրուիր կամ չի խօսուիր տան, դպրոցին կամ շուկային մէջ, այլ խօսքով՝ ամենօրեայ հաղորդակցութեան միջոց մը չէ, կ'աղքատանայ, կը սնանկանայ, իր կարողականութիւնը կը կորսնցնէ եւ պատմութեան հոսանքին մէջ ալ կամաց կամաց կ'ընկղմի, իր հետ տանելով նաեւ իր ազգը: Լեզուն կենդանի բջիջ է, յիշեցուցած ենք միշտ, եթէ չսորվինք, չգործածենք չգարգացնենք կը մեռնի:

Բայց, անկեղծօրէն մատնանշելով, ըսենք որ սփիւռքներու լայնքին եւ երկայնքին, ազգովին մեր լեզուին նահանջի ներկայութիւնը կ'ապրինք ամէն օր եւ ամէն վայրկեան: Միւս կողմէ սակայն, եւ բարեբախտաբար մեր շուրջը ունինք անհատներ, գրող նուիրեալներ, նաեւ հայ մամուլ, որոնցմով լեզուն կը ոչ միայն մեր մայրենին կը գոյատեւէ, այլ՝ իրենց ստեղծագործութիւններով կը հարստանայ: Սակայն ինչո՞ւ նման յառաջաբանի մը կրկնութիւնը: Որովհետեւ, եզակի գանձ է մեր լեզուն: Այս մասին եւ ամէն առիթով խօսած ենք եւ անդրադարձած լայնօրէն, նեղ-լայն մեր հանդիպումներուն՝ գրուցած ենք: Որովհետեւ, նաեւ մտահոգ ենք անոր ճակատագրով: Որովհետեւ, իբրեւ մեկական մտահոգ հայեր, յստակ պաշտամունք ունինք մեր մայրենին նկատմամբ եւ հանդէպ: Որովհետեւ, նաեւ բոլորս ալ ունինք համոզումներ, մանաւանդ եւ յատկապէս մեր ազգին հետաքրքրող մեծագոյն այս տագնապներուն

շուրջ:

Արդ, մենք, իբրեւ մտահոգ մարդիկ, թէեւ կը տագնապինք, թէեւ շատ յաճախ այս հարցերու դրական երեւոյթներով ալ կը խանդավառուինք, սակայն երբեք չենք յուսահատիր: Ու նորութիւն չէ որ պիտի ըսեմ.- համաշխարհայնացումը իր սարսափելի «աւերներ» կը գործէ ամէն տեղ, եւ մեր մօտ ալ ու մեզմէ ալ եւ ամէն օր «գոհեր» կը խլէ: Անոր համար, աշխարհացրի գիտակից հայորդիներ, համայնակուլ եւ վտանգաւոր այս աղէտին դիմաց, իրենց աչքերը կը յարեն հայ մշակոյթին, եւ կը փորձեն անով պաշտպանել, եւ պատասպարել հայ

նոր

սերունդը:

Ճիշդ է որ սփիւռք կ'ապրինք, եւ ունինք մեր անձնական, ազգային եւ գաղութային հարց-տագնապներն ու ամենօրեայ մտահոգութիւնները, սակայն միշտ առաջնահերթ նկատած ենք մեր մայրենի լեզուին ճակատագիրը: Որովհետեւ, կը հաւատանք, որ մեր լեզուի հրապոյրն ու գեղեցկութիւնը, այլեւս շատ քիչերը գիտեն: Նոր սերունդը, քիչ ծանօթ է հայոց լեզուին, ինչպէս անոր լեզուական, նոյնպէս եւ բառագիտական

յատկութիւններուն:

Պատճառը... օտար լեզուի ներկայութիւնն է դպրոցի, ընտանեկան յարկի ու մանաւանդ ապրած

անմիջական

շրջապատէն

ներս:

Բայց, հակառակ լեզուն պահպանելու տարրուած մեծ ճիգերուն, այսօր նոր սերունդի շատ մը ներկայացուցիչներուն մօտ, անոնց տուններէն սկսած մինչեւ յաճախած հայ վարժարաններն ու նոյնիսկ անոնց անդամակցած կեդրոններէն ներս, մեր մայրենին գործածութեան նահանջը

զգալի

է:

Գիտենք, եւ տեսանելի է թէ մեր նոր սերունդը հայերէն չի կարդար կամ, շատ քիչ կը կարդայ: Շատեր, զիրար չի խաբենք, նոյնիսկ չեն գիտեր, եւ դժբախտաբար նոյնիսկ չեն կրնար հայերէնով լման նախադասութիւն մը կազմել...խօսիլ...գրել...: Կը շփոթեն: Նեղը իյնալնուն պէս, առաջնահերթութիւնը տեղական լեզուին տալով, կը սկսին օտար բառեր գործածել:

Չեմ փորձեր այս տողերով միայն կշռադատել, բայց յստակ կ'ըսեմ ու կը կրկնեմ թէ այս բոլորը ազգային մտահոգութիւն պատճառող ազդակներ են: Յիշենք, որ մեր լեզուի անհետացումը, մեր դարաւոր մշակոյթի անհետացումն ալ է, որ վտանգ ալ է մեր ցեղի գոյութեան: Սա կը նշանակէ ձուլուիլ եւ դառնալ անճանաչելի ժողովուրդ: Իսկ եթէ, չար սատանայ, մեր նոր սերունդը զրկուի իր մայրենիէն ու հեռանայ հայերէն լեզուի ամենօրեայ



գործածութենէն, հաւատացէ՛ք, կամաց-կամաց կը կորսնցնէ ազգային իր մտածողութիւնն ալ, ստեղծագործական կարողութեան եւ պատմական ժառանգութեան կողքին: Այս բոլորէն ետք, իմ կարծիքով մեծագոյն պատասխանատուն է, եւ կը մնայ նախ՝ ծնողքը, որովհետեւ ան է որ իր կեանքի օրինակով եւ կենցաղով կ'որոշէ իր զաւկին հայ մնալն ու հայօրէն ապրիլը: Բացառութիւններու մասին չէ խօսքը: Վերը յիշեցի մտահոգութիւններ: Աւելցնեմ, որ այս բոլորը թէեւ մտահոգութիւններ են, սակայն խորքին մէջ՝ ահագանգ ալ են: Կը կարծեմ նաեւ որ բոլորս ալ կ'ըմբռնենք այս իրականութիւնը, բայց չենք կրնար հաշտուիլ անոր ներկայութեան հետ: Աւելին՝ ծնողներու անհոգութեան կողքին, նոր սերունդի լեզուափոխութիւնն ալ վտանգ կը սպառնայ: Դարձեալ տեսանելի է թէ նոր սերունդը ինչպէ՞ս «նորութիւններով» հետաքրքրուած է, եւ որուն անմեղ «գոհը» դարձած է մեր լեզուն որ սկսած է աղաւաղուիլ: Որովհետեւ, շատեր մոռցած են իրենց կեանքին մէջ մեր մայրենիին էականութիւնը, անոր գեղեցկութեան կողքին:

Մենք տկար ժողովուրդ չենք: Ունինք ամէն կարողութիւն: Սակայն մեզի կը պակսի մեր ինքնութիւնը պահելու վճռակամութիւնը: Օտարութեան ճանկերուն մէջ ինկած ենք բոլորս ալ, եւ այս անիծեալ օտարութիւնն ալ իր ճանկերով մեզ բռնած է եւ մեզ կը հիւծէ, կը հալեցնէ:

Խրատական տուողի յաւակնութիւնը չունիմ, եւ երբեք չեմ ունեցած: Պարզապէս այս տողերը մեր ինքնութեան հաւատարիմ մնալու արդար կանչեր են, որոնք անմեղ յիշեցման կողքին, պարտաւորութիւն-յանձնառութիւններ կը դնեն իւրաքանչիւրիս վրայ:

Գեորգ Պետիկեան

Հայրենիք

15 Յուլիս 2025

ԱՆՏԱՆՕԹՈՒՀԻՆ

ԽՈՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հարցե՛ր, հարցե՛ր կը մտատանջէին զինք շարունակ: Չէր կրնար հաշտուիլ այն գաղափարին հետ, յատկապէս, որ գիտութիւնը, անոր հրաշալիքները, կարծես աւելի մեծ կատաղութիւն, տեսակ մը յոխորտանք ու գոռոգամտութիւն յառաջ բերեր էին մարդ էակին, պետութեանց, զանոնք կտռավարող ոյժերուն մէջ: Մարդը դարձեր էր անկառավարելի, իր իսկ ոյժով արբեցած, զինովցած, խենթացած...Վկայ՝ պատերազմները, մտորեց, որոնք կը մոլեգնէին վայրագօրէն, սպառնալով խեղդամահ ընել քաղաքակրթութիւններ, երկիրներ, սովամահ ընել ժողովուրդներ, առանց դոյզն խղճմտանքի, առանց մարդկային իրաւունքներու, ժողովրդավարական արժէքներու իրաւ պաշտպանութեան...

Այդ եզրոյթները իսկութեան մէջ դարձեր էին շրթանց մարգանք եւ ուրիշ ոչինչ: Շարունակ կրկնուելով յանկերգի մը նման՝ իմաստագուրկ դարձեր էին: ԲԻՐՏ ՈՅԺԸ իր արքանին մէջ առեր էր ամբողջ մարդկութիւնն ու աշխարհը: Բիրտ ոյժի անխնայ կիրարկումով բնութիւնը կ'ապականուէր հետեւողականօրէն, բիրտ ոյժի կիրարկումով երկիրներ ու ժողովուրդներ կը յօշոտուէին յանուն անոնց հումքային պաշարներու թէ այլ հարստութեանց առգրաւման, յափշտակման: Մարդը խորքին մէջ չէր քաղաքակրթութեամբ, անոր մէջ դեռ արթուն էր բարբարոս գազանը...Դեռ անյագ ախորժակով կը գործէին անասնական կիրքերն ու մոլուցքները...Աստուած իմ, հառաչեց: Մինչ արհեստագիտութիւնը իր հրաշալի հնարքներով, իր արհեստական բանականութեամբ եւ թուայնացած աշխարհի ընձեռած հնարաւորութիւններով կը վերափոխէր հին աշխարհը, բայց այդ նոյն



արհեստագիտութիւնը նորանոր մարտահրաւերներու առջեւ կը կանգնեցնէր «քաղաքակիրթ» աշխարհը: Ալան-թալանը, կողոպուտը, ոճիրն ու յանցագործութիւնը, ահաբեկչութիւնը, մարդասպանութիւնն ու ցեղասպանութիւնը կ'իրագործուէին աւելի հմուտ միջոցներով: Ամէն օր ան կը կարդար կամ հեռատեսիլի պաստառէն կը դիտէր այնպիսի արինալի եւ սրտաճմլիկ դէպքեր, որոնք կը կատարուէին ամենայն սառնասրտութեամբ, ամէնէն սահմոկեցուցիչ եղանակներով, օրը ցերեկով, աշխարհին ի տես...եւ ան ափ ի բերան կը մնար այս բոլորին ի լուր կամ ի տես...

Կա՞ր փրկութիւն այս բոլորէն: Կա՞ր դաստիարակութեան այնպիսի մեթոտ կամ եղանակ որ անիկա՝ դաստիարակութիւնը, կարենար մարդը ՄԱՐԴԿԱՅՆԱՅՆԵԼ, կարենար մարդուն մէջ ԳԱԶԱՆԸ սպաննել եւ դարձեալ

ինկաւ տանջակոծ մտորումներու զիրկը: Գուցէ մարդ էակին մէջ, առաջին հերթին, պէտք է մշակել կարեկցանքի, գթասրտութեան, ուրիշին ցաւը զգալու եւ զայն կիսելու ունակութիւնը եւ յարակից բարոյական յատկութիւններ, խորհրդածեց: Պարզ էր որ ներկայ դաստիարակութիւնը էապէս ձախողած էր նման կարեւորագոյն հարցերու մէջ: Խօսելով մարդկային իրաւանց պաշտպանութեան մասին, ժողովրդավարական արժէքներու մասին, միաժամանակ չէր կրցած զանոնք գործնականօրէն կիրարկելու դասեր տալ մատուցելով կամ դեռատի ու նորահաս սերունդին: Արդե՞ք շատ անհատապաշտ թեքում ունէր անիկա:

Երբեմն ականջալուր կ'ըլլար դպրոցներուն մէջ կատարուած եւ կատարուող անիրաւութեանց մասին եւ կը սարսռար: Կը պատահէր որ դպրոցին մէջ գործող ուսուցիչը հարցեր ունենար փոքրիկին ծնողներուն հետ եւ իր .վրէժը» լուծէր վարկաբեկելով փոքրիկը, սպաննել փորձելով անոր ոգին, անարգել անոր արժանապատուութիւնը բոլորին ի տես...Աստուած իմ, դուրս թռաւ իր բերնէն: Բայց եղելութիւնը կատարուած փաստ էր: Ինք անձամբ ականջալուր եղած էր կատարուածին: Այս էր միթէ՞ դաստիարակութիւնը: Եւ ինչպէ՞ս նման մօտեցում ունեցող դաստիարակը պիտի կարենար սերունդ պատրաստել...

Պարագայ մը յատկապէս իր վրայ շատ խոր ազդեցութիւն ձգած էր: Խնդիրը կը վերաբերէր փոքրիկ 11-ամեայ տղու մը, որ իրեն բացած էր իր վիրաւոր սիրտը: Դասարանին մէջ, երբ իւրաքանչիւր աշակերտ տուեալ ուսուցիչին կը պատմէր թէ ի՞նչ կ'երագէր ըլլալ յետագային, այս փոքրիկ տղան ալ իր հերթին կ'արտայայտէր իր երագանքը այդ մասին: Ուսուցիչը հեզանքով կը պատասխանէր. «Դուն այս դոյլ մը ջուրն անգամ չես կրնար մէկ տեղէն միւսը փոխադրել առանց թափելու...Դուն ի՞նչ կրնաս ըլլալ...»: Նշեմ որ այդ փոքրիկը յետոյ շատ յառաջադէմ ուսանող մը դարձաւ ամէնէն հեղինակաւոր կրթական հաստատութեանց մէջ:

Մէկ այլ պարագայ մը յիշեց: «Համբաւաւոր» դաստիարակ մը օր մը աշակերտի մը մեծ հօր նկատել կու տար ի ներկայութեան աշակերտին որ իր թոռնիկը՝ տուեալ աշակերտը, այնքան անյոյս էր, որ դժուար թէ ան կարենար նոյնիսկ երկրորդական վարժարան մը

աւարտել: Նոյն այդ աշակերտը յետոյ հասաւ բարձրագոյն յաջողութեանց: Այսպէ՛ս պէտք էր դաստիարակել աշակերտը, անոր ոգին կոտրելո՞ւ վ, հարց կու տար ինքն իրեն:

Նման պատահարներ շատ կային ցաւօք, որոնց ականջալուր կ'ըլլար ականմայ եւ կը շշմէր, կը ցաւէր ի խորոց սրտի: Նման դաստիարակութիւնը կը ծառայէր միայն աշակերտին եւ-ը, արժանապատուութիւնը խոցելուն, ապագայի յոյսն ու երազը չքացնելուն, կարծես դաստիարակին նպատակը ըլլար աշակերտը յուսաբեկելը...Ապշեցաւ:

Երկարօրէն մտածեց դաստիարակութեան մասին, որ ըստ իրեն փրկութիւնը կրնար ըլլալ մարդկութեան: Դաստիարակութիւնը, խորհեցաւ, պէտք է ոգի, յոյս ու հաւատք ներշնչէ աշակերտին, սէր սերմանէ անոր մէջ, յարգանք սորվեցնէ մեծին թէ պզտիկին հանդէպ...Մանաւանդ երբեք եւ երբեք չվիրաւորէ անոր խոցելի եւ զգայուն արժանապատուութիւնը: Այսինքն, դաստիարակութիւնը պարտի կրթել ոչ միայն միտքը, այլեւ սիրտն ու հոգին երեխային, մտորեց: Եւ ատիկա արդիւնաւետ կերպով ընելու համար, նախապայման է որ դաստիարակը ի՛նք այդպէս դաստիարակուած ըլլայ եւ իր առօրեայ վարմունքով ճշմարտօրէն ցոլացնէ իր իրաւ դաստիարակութիւնը: Որքան տեղին կը հնչէին այս առումով մեծ մանկավարժ Պօղոս Գեորգեանի խօսքերը. «Ըլլաս ուսուցիչ, ծնողք թէ մանկավարժ, դաստիարակեա՛լ զանձն քո», մտաբերեց:

Աւելի խոր մտածելով, նկատեց որ մարդ էակին մէջ բարին ու չարը թերեւս կ'աճէին քով-քովի, ինչպէս ծաղիկն ու մոլախոտը: Դաստիարակութեան խնդիրը պիտի ըլլար գուցէ այնպէս կրթել փոքրիկը, որ ծաղիկները ծաղկին ու շատնան այնքան որ տեղ չթողուն մոլախոտին: Բարին, բարի վարքն ու արարքը շատնային այնպէս որ տեղ չմնար չարութեան կամ յոռի վարքի...


Սա երա՞զ էր արդեօք, թէ՞ իրականանալի բաղձանք:

Բայց, եզրակացուց, որ ամէն ինչ երազանքէն կ'առնէ իր ծննդոցը եւ յետոյ յամառ ու աննահանջ աշխատանքով, մաքառումով կը դառնայ իրականութիւն: Կարելորը հաւատալն է մարդ էակին, սիրել զայն եւ իսկապէս յանձնառու ըլլալ անոր դաստիարակութեան պատասխանատու գործին: Ըլլալ արհեստավարժ մանկավարժ, որուն առաքելութիւնը փոքրիկը ՄԱՐԴ դարձնել է: Յետոյ հարց տուաւ թէ կայի՞ն իրապէս նման մանկավարժներ: Ցաւօք սրտի, սակաւ էին անոնք, գոնէ իրեն ծանօթ կրթական մշակներուն մէջ: Եւ ասկէ կը ծագէին շատ ու շատ խնդիրներ կապուած համայնքի թէ ազգի ապագային, մտորեց ան դառն զգաստութեամբ:

Երան Գույումճեան

Սեպտեմբեր 2025

ԱՆՆՊԱՏԱԿ ԴԵԳԵՐՈՒՄՆԵՐ ՄՕՏ ԵՒ ՀԵՌՈՒ



Մինեմայէն դուրս կ'ելլեմ յուսախաբ: Վուտի Ալէնը իմ սիրած շարժապատկերի բեմադրիչներէս մէկն է, որուն ֆիլմերը միշտ հետաքրքրաշարժ թեմաներ կը շօշափեն.բայց այս անգամ շատ սովորական նիւթ մըն էր ներկայացուածը. երրորդի մը պատճառով պառակտուած զոյգի մը պատմութիւնը. հետեւաբար ակնկալած գոհունակութիւնս չստացայ. սակայն կ'արժէր տեսնել, գէթ միայն վայելելու համար Փարիզի գեղեցկութիւնը եւ լսելու ականջահաճոյ



Ֆրանսերէն լեզուն:

Փողոցին ներգրաւող մթնոլորտը, եռուզեռը եւ հաճելի օդը թոյլ չեն տար, որ տուն վերադառնալու մասին մտածեմ: Քայլերս զիս կ'առաջնորդեն քաղաքին պատմական շրջանը. հին շէնքեր, եկեղեցիներ, կառավարական շէնքը Casa Rosada. Միշտ սիրած եմ քաղաքներուն հնամեայ փողոցները, կառոյցները, որոնք պատմութեան վկանները եղածեն, որ մեզի բան մը, յուշ մը կը փոխանցեն անցեալէն:

Այսօր Պուէնոս Այրէս հաստատուած զանազան համայնքներու օրն է. այդ առթիւ Մայիսեան պողոտային վրայ, սարքած են տաղաւարներ, ուր կը ծախուին իւրաքանչիւր երկրի յատուկ արտադրութիւններ. Ներկայ է ճափոնացին, չինացին, հնդիկը, արաբը եւ հայը: Բայց այս տարի նախորդ տարիներու փայլը եւ ճոխութիւնը չունի, ոչ ալ գնորդներ: Հայկականն ալ քիչ մը անշուք է. կը վաճառուին հայկական ֆութպօլի խումբին «Տեփօթիվօ Արմէնիօ»ի շապիկներ, հայկական կերակուրներ եւ անուշեղէններ: Մեր գաղութին պարախումբը ելոյթ ունեցաւ երկու պարով եւ արժանացաւ բուռն ծափահարութեան:

Հետիոտն կը շարունակեմ շրջագայիլ: Փողոցը կը վիստայ անցորդներով, որոնք կ'ուզեն մայրամուտի արեւուն վերջին շողերը վայելել. ոմանք կը քալեն եւ միաժամանակ ախորժակով կ'ուտեն choripanի սանտուիչը. իմ ալ ախորժակս քրքրելով. խմիչքները, պաղպաղակները, շոքոլաները կը տողանցեն մարդոց հետ:

Հանրաշարժը կ'առնեմ տուն վերադառնալու համար. բայց երբ շէնքէն ներս պիտի մտնէի, միտքս կը փոխեմ, բանալին կրկին պայուսակիս մէջ կը նետեմ. տակաւին չեմ յագեցած պտոյտէս: Այս անգամ մեր տան կից փողոցները կը շարունակեմ դեգերիլ: Ըսեմ, թէ մեր թաղամասը, որուն պատերուն վրայ հիանալի grafitiներ գծուած են, որ կարծես պատերուն շարունակութիւնն են. (ինքնաշարժ մը, որուն վարորդը ձեռքով կը բարեւէ անցորդներուն, կին մը թիկնաթոռին վրայ ընկողմանած՝ գիրք կը կարդայ, շուն մը դրան առջեւ փոքրիկին հետ կը խաղայ.) ուղղակի իրականի տպաւորութիւն կը ձգեն, գոյները վառ են եւ ներդաշնակ. շատ հաճելի է դիտել այս բոլորը. փողոցի իւրայատուկ արուեստ:

Զբօսաշրջիկներուն սիրած շրջաններէն մէկն է Փալերմօ Սօհօն, ճաշարաններ, սրճարաններ, գարեջուրի յատուկ «պար»եր, շրջուն երգիչներ, նուագողներ: Հիմա, որ մութը կոխեց, լոյսերը վառեցին եւ փողոցը կարծես գիշերային շքեղ զգեստով պարուրուած, զարդարուած, անճանաչելի դարձած է : Մեր թաղամասը միշտ կեանքով կ'եռայ, յարատեւ շարժում կայ: Կարծեմ ես ալ արժանի եմ այսքան ժամեր քալել յետոյ, պաղ գարեջուր մը խմելու եւ սանտուիչ մը ուտելու: Լիովին կ'ըմբռնեմ ամէն բան, մարդիկը, խմիչքը, սանտուիչը, նուագը, լոյսերը, աղմուկը. հոգիս անհունօրէն երջանիկ է այսօր:

Ամրան եղանակին, հագուադէպօրէն առտու կանուխ, երբ փողոցները տակաւին ամայի են, եւ չեն ապականած ինքնաշարժերու ճչակներուն անախորժ ձայնով, նստած մեր պատշգամբ, որուն առջեւ մշտադալար ծառեր գեղեցիկ տեսարան մը կը պարզեն, սուրճս կը խմեմ եւ փողոցը կը դիտեմ եւ հրճուանքով կ'ունկնդրեմ օդին մէջ ճախրող, կամ զիրենք հիւրընկալող ծառերուն վրայ թառած թռչուններուն ուրախ ճռուողիւնները:

Մեր շէնքին դիմաց Մէյնթ Կրեկօրի անունով անգլիական դպրոց մը կայ. երկու փողոց անդին, մեր Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կայ եւ կողքին համանուն դպրոցը, ուր տարիներէ ի վեր կը պաշտօնավարեմ. մեր ընտանիքին ճակատագիրն է կ'երեւի: Հալէպի մէջ եւս, մեր տունը ճեմարանին կից էր եւ քովը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին կար. քաշողական ուժ մը կայ. տուն, դպրոց եւ եկեղեցի. Հա՛ աւելցնեմ, հոս նոյն մայրին վրայ կայ նաեւ մեծ գրադարան մը. որ մեր աշխարհը կ'ամբողջացնէ:

Քանի որ դպրոց ըսի, մի քանի տող հայապահպանման ամբողջ հանդիսացող այս հաստատութեան մասին գրեմ: Այս վերջին տասնամեակին եւ քիչ մըն ալ աւելի, մեր դպրոցները որքան փոփոխութեան ենթարկուեցան: Հետզհետէ կ'աւելնայ ոչ հայ աշակերտներուն թիւը. միաժամանակ կ'աւելնան նաեւ հայրենիքէն արտագաղթող հայ



աշակերտները .ունինք մի քանի չինացի աշակերտներ, որոնք սպաներէնի, անգլերէնի կողքին կը սորվին նաեւ հայերէն: Համաշխարհայնացում:

Վերջացնեմ. ահաւասիկ իմ ամենօրեայ, երկու փոքր անդին գտնուող մի քանի քայլ տեւող երթս դէպի մեր դպրոցը: Մեր տան անկիւնի դեղաբանը, եւ իմ «բժիշկ» դեղագործը՝ Ֆէրնանտօն, որ յաճախ, հակառակ իր կամքին բժիշկի դեր կը կատարէ, տեսնելով որ դիմացը գտնուող կինը պինդ գլուխին մէկն է, բժիշկի պիտի չերթայ: Երկար տարիներու ծանօթներ եւ դրացիներ ենք. ապա « Լօ տէ Խեսուս» ճաշարանը, նախապէս նպարեղէնի խանութ, որուն տէրն էր սպանացի Խեսուսը. Իր մահէն յետոյ, իր անունը եւ ներքին յարդարանքը պահելով հանդերձ՝ վերածուեցաւ ճաշարանի: Յերեկ թէ գիշեր, յաճախողներով լեցուն է, նշանաւոր է իր համեղ խորովածը: Գարուն է . դպրոց չմտած, պահ մը զմայլանքով կը դիտեմ «Խաքարանտա» ծառին վրայ բացուած բուրումնաւէտ մանիշակագոյն ծաղիկները, որոնք թարմ աւիւն կը սրսկեն հոգիիս մէջ, որպէզի օրս լաւ տրամադրութեամբ սկսիմ:

Ուրիշ առիթով կը խօսիմ Արժանթինի մէջ հասակ առնող չորրորդ, թէ հինգերորդ սերունդին հայերէն սորվեցնելու անվիատ մարտահրաւերին մասին, հակառակ տիրող աննպաստ պայմաններուն:

Այսօրուան համար այսքան. աննպատակ դեգերումս հասաւ իր աւարտին. ծառեր, թռչուններ, լոյսեր, ծաղիկներ եւ աշակերտներ ցոլեսութիւն կ'ըսեն ձեզի:

ՍՕՍԻ ՀԱՃԵԱՆ

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

Մարդկային ՆԿԱՐԱԳԻՐՆ է որ իւրաքանչիւրիս համար կը բնորոշէ մեր բուն, իսկական ԱՐԺԷՔԸ... Կրնաս նոյնիսկ հանճար մը ըլլալ, մասնագիտական եւ այլ կարողութիւններով օժտուած, բայց եթէ ՆԿԱՐԱԳԻՐԷ գուրկ ես, յայնժամ շատ բան կը պակսի քու արժէքէդ... Իսկ նկարագիրը՝ ճշմարտախօսութիւն է, ճշմարիտին յանձնառու ըլլալ է, կեցուածք ցուցաբերել է, գէշ ըլլալու գնով արդարը պաշտպանել է, սկզբունքային ըլլալ է եւ նման առաքինութիւններ:

.....



Մոմի վտիտ լոյսն անգամ կրնայ խաւարը ցրել... Բարի գործերը՝ որքան ալ փոքր ըլլան անոնք, իրար վրայ կուտակուելով, խտանալով կը ստեղծեն այն բարի, լուսաւոր մթնոլորտը, հոգեբարոյական այն արժէքներու համակարգը, որ տակաւ կրնայ բարեփոխել մեր երկիրն ու հասարակութեան որակը: Բարին՝ ժամ առ ժամ, վայրկեան առ վայրկեան, մեր խօսքերէն, մեր արարքներէն ու վարքագիծէն շողարձակուելով, կրնայ դուրս վանել այն չարն ու խաւարը, որոնք անարգել կրնան տարածուիլ ու իշխել

ամէնուրեք, եթէ չարութեան պատասխանենք չարութեամբ եւ ոչինչ ընենք որ լոյսը



թագաւորէ...Շատ բան մեր ազատ կամքէն է կախեալ որոշապէս:

.....

Պաշտօնական թէ անպաշտօն, ուղղակի թէ անուղղակի ԳՈՂԵՐՈՒ Ժամանակ է...Ինչպէ՞ս ընել՝ մարդը շահագործելու, չարաշահելու, կողոպտելու, օգտագործելու, խաբելու համար, կարծես սա դարձեր է կեանքի նպատակ...Վայրի դրամատիքութեան այս հոգեբանութիւնն ու մտայնութիւնը, գործելակերպը տակաւ կը կատարելագործուին եւ կը կլանեն բովանդակ մարդկութեան ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԵԱՆ աւանդական հասկացութիւնը: Ո՞Ր Կ'ԵՐԹԱՅ ԱՇԽԱՐՀԸ ԱՅՍՊԷՍ...Վստահաբար մոլորակային ԱՂԵՏ մը, Աստուած մի՛ արասցէ, պիտի գայ ամէն ինչ գլխիվայր շրջելու եւ վերջ դնելու ամէն ինչին: Բարոյական սթափութիւնը աւելի քան հրամայական է դարձած:

.....

Սրբազան խենթերը կ'ըլլան ազգի այն նուիրեալները, որոնք անկաշառ, անհաշիւ, անշահախնդիր, գաղափարական տեսլականով եւ իտեալով ներշնչուած, տքնաջան կը նուիրուին ազգին ու հայրենիքին կեանքին մէջ բարեփոխումներ բերելու վսեմ նպատակին...Անոնք շատ անգամ կը ծաղրուին, կը խարազանուին եւ կը քննադատուին որպէս «անիրապաշտ», հողէն կտրուած, վերացական «խենթեր», սակայն Ժամանակը ցոյց կու տայ թէ անոնց շնորհիւ է որ նոր վերելք ու նոր որակ կ'արձանագրէ ազգն ու հայրենիքը:

.....

Չեմ սիրեր զանգուածային «մշակոյթ»ը, իր զանգուածային ապրելակերպով, զանգուածային չարժէքներով, զանգուածային սպառման ապրանքներով, զանգուածային ճաշակով, զանգուածային մտայնութեամբ...Կարծես մարդը կը միտին զրկել իր անձնականութենէն, իր անհատականութենէն, զայն համահարթեցնել, զայն լոկ թիւի վերածել: Սա ալ մեքենայացումի եւ ԱՆՄԱՐԴԿԱՅՆԱՅՈՒՄԻ կերպ է եւ ուրիշ ոչինչ:

.....

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ առանցքային հիմնաքարը՝ մեր հայրենակիցին ԱՐԺԱՆԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ յարգելն է, ինչպէս նաեւ՝ անոր կարծիքն ու տեսակէտը, որքան ալ մենք տարակարծիք ըլլանք անոր հետ...: ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ այբուբենը իրարու հետ լեզու գտնելն է, զիրար հասկնալ փորձելը, առանց խճբժանքի, բամբասանքի եւ մանաւանդ՝ զրպարտութեան...Այլապէս, բոլոր բարբաջանքները, տեսութիւններն ու ուսումնասիրութիւնները՝ նոր որակի պետութիւն ստեղծելու մասին, կը դառնան ՄԻՆ ու ՄՆԱՄԵՋ խօսքեր եւ երբե՛ք չեն ներշնչեր ՀԱԻԱՏՔ եւ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՆ, քանզի առանց մարդկային, հոգեկան նոր որակի, անկարելի է կեանքի կոչել նոր որակի պետականութիւն:

.....

Համաշխարհայնացած դրամատիքութեան դրուածքին համար՝ ամէն ինչ վաճառելի ապրանք է. մարդը, պատմութիւնը, մշակոյթը, հայրենիքները, նոյնիսկ բնութիւնն ու անոր



պաշարները եւ՝ ազգերը, որոնք ներկայիս զանգուածաբար կ'արտագաղթեն մարդուժ հայթայթելու այլ պետութեանց եւ յընթացս կորսնցնելով իրենց ազգային դիմագիծը...Անդէմ, անդիմագիծ եւ անազգ բազմութիւնները տակաւ կը շատնան եւ կը դառնան շրջուն խլեակներ...Սա քաղաքակրթութեան ՃԳՆԱԺԱՄՆ է:

.....

Կեցուածք ցուցաբերելը դժուար է առ հասարակ, մանաւանդ երբ կեցուածքովդ տարակարծիք ես մեծամասնութեան կարծիքին հետ...ՈՉ ըսելը ընկալեալ ընդհանուր կարծիքին յանդուգն քայլ է, գոր շատ քիչեր կը նախաձեռնեն առնել...Ներքին համոզումներու վրայ հիմնուած ՈՉ-ը ազատ անհատականութեան յատկանիշ է, ոգիի քաջութիւն եւ սկզբունքայնութիւն:

.....

Գաղթը, տեղափոխութիւնը, երկրէ-երկիր ապաստան կամ գործ փնտռելը դարուս «հիւանդութիւնն» է կարծէք...Այսպէս, երկիրներու բնիկ նկարագիրը տակաւ կը փոխուի, մարդ էակին ազգային եւ հայրենական պատկանելիութեան զգացումը կ'աղաւաղուի, ինքնութիւնը կ'այլասերի...Տակաւ մարդ էակը կուլ կ'երթայ համաշխարհայնացման ահեղ հոսանքին եւ ծնունդ կ'առնէ համաշխարհային մարդը՝ դիմագուրկ, հոգեգուրկ եւ արմատախիլ:

.....

Բարոյականութենէն դէպի անբարոյականութիւն անկումը գուցէ քայլ մըն է միայն: Երբեմն պզտիկ սուտ մը, քծնանքի փշուր մը, անգութ վերաբերմունք մը՝ տկարին եւ ճնշուածին, անտարբեր հայեացք մը եւ անորոշ կեցուածք մը՝ կեղծիքին, սուտին, անարդարութեան...Բարոյականութիւնը գործօն ըլլալ կը պահանջէ, յստակ կեցուածք կը պահանջէ, պայքարի ոգի կը պահանջէ...: Իւրաքանչիւր անտարբեր մարդ կաթիլով մը կ'աւելցնէ առկայ անբարոյականութիւնը: Իւրաքանչիւր յարմարող եւ համակերպող մարդ նորանոր անբարոյականութեանց ծնունդ կու տայ՝ կամայ թէ ակամայ:

.....

Հայեցի հարազատ ՄՇԱԿՈՅԹՆ է մեր ազգային ինքնութեան բանալին...Առանց այդ մշակոյթին, մենք կը դադրինք ՀԱՅ ըլլալէ: Այս օրերուն, օտարամոլութենէ եւ շահամոլութենէ տարուած, հայը ինքզինք կ'որոնէ օտար մշակոյթներուն եւ բարքերուն անձնատուր...Սա տեսակ մը ստրկամտութիւն է որոշապէս: Սոկրատեսի խօսք-պատգամը, դարերու խորքէն, այսօր ալ կը հնչէ իր ամբողջ այժմեականութեամբ՝ ԾԱՆԻՐ ՋՔԵԶ: Մենք այնքան էական կարիքը ունինք այսօր եւ ընդմիշտ ճանչնալու մենք զմեզ՝ հոգեմտաւոր սնունդ ստանալու մեր հարազատ մշակոյթի ակունքներէն, փոխանակ մուրալու եւ աղերսելու օտար ու խորթ «մշակութային» ոչ-արժէքները

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Հոգին ի քուն կ'ըլլայ յաճախ,
Կամ թմբիրի մէջ թեւաթափ,
Երբ կը տեսնէ որ մամունան
Բռնակալ տէրն է կացութեան:

.....

Խառնափնթոր ժամանակ է,
Ո՞վ իմանայ ճիշդը ո՞րն է,
Ամէն ոք կը խօսի ճիշդէն,
Սուտն ու իրան են խառնուեր...

.....

Ի՛նչ-ի՛նչ խօսքեր մենք կուլ տուինք
Դարուն այս խեղճ ու անհոգի,
Ու մնացինք ծարաւ լոյսի,
Կենաց Բանի ու ոգիի:

.....

Սպասումով մենք կ'ապրինք, կանք,
Ո՞ր տարիքի մէջ ալ ըլլանք,
Միրտը սպասում թէ չունենայ,
Կրնա՞յ տրոփել դեռ կենսավառ...

.....

Մեծերու դարն է սահեր ու անցեր,



Փոքրիկ մարդեր են ամէն, ամէն տեղ,
Կը բարբառին մե՛ծ, մե՛ծ խոստումներով,
Բայց կ'ապրին միայն սին ու փուճ կեանքով:

.....

Արդարութեան տեղ հիմա բիրտ ոյժն է,
Որ տընօրինէ մարդկային կեանքեր,
Չկայ նժարը որ կշռադատէ
Սուտն ու կեղծիքը՝ ճիշդէն, իրաւէն:

.....

Թէ խօսիս ճիշդը, կը ցեխարձակուիս,
Հայհոյանքներու կը դառնաս բաժին,
Իրենց սին ես-ը, հատուածականը
Աւելին արժէ քան ճշմարիտը:

.....

Միրտդ, հոգիդ պիտի մաքրես
Մաղձ ու թոյնէն, ժանգ, փոշիէն,
Յետոյ միայն գրիչդ առնես
Ու գիր գրես, գիրը սուրբ է...

.....

Չտորվեցանք սխալներէն,
Չիմաստնացանք պատմութենէն,
Մնացինք նոյն միամիտը,
Գգուըռտոցն էր մեր բաժինը...

.....

Կեանքն իր հունով պիտ' ընթանայ, սի՛րտ, դիմացի՛ր,
Լարէ կամքդ, ոյժդ գտիր ու պայքարէ միշտ անվիատ,
Թէ յանձնուիս չար հողմերուն, կը խեղդուիս, լա՛ւ իմացիր,
Քեզ մե՛կ կեանք է լոկ պարգեւուած, գոնէ ապրէ՛ր զայն լիովին:

.....

Մի՛ պղծեք դուք հողը հայոց
Յանուն շահի կոյր մոլուցքին,
Ան պարգեն է յաւերժախօս
Մերունդներուն անցեալ, գալիք...

.....

Գիրդ եթէ չհասկնան, մի՛ զայն վատներ չիմացողին,
Խօսքդ եթէ չուզեն լսել, անցի՛ր, գնա՛, ա՛լ մի խօսիր,
Կամովին կոյր ու փակ միտքը ինչպէ՛ս բանալ պիտ' կարենաս,
Թէ ունենաս հրաշք բանալի, փականն ժանգոտ ինչպէ՛ս բանալ...

.....

Մեր գիտցածը հիւլէ մըն է



Զգիտցածի տիեզերքին մէջ,
Ան սոսկ ջուրի կաթիլ մըն է
Իմացութեան ովկեանին մէջ:

.....

Շռայլ եղաւ սիրտս բարի, ներողամիտ, անյիշաչար,
Բարի խօսքին արձագանգեց մէկի դէմ տասն հատուցելով,
Թէ զայրացաւ չար խօսքերէն, չոգեց պահել իր մէջ քէն, ոխ,
Շարունակեց բարի նայիլ մարդուն, կեանքին, ամենուն ալ:

Երան Գույումճեան